

ՆԱԽԱԲԱՆ

Պայմանավորվող կողմերը,
Ցանկանալով զարգացնել և հեշտացնել բեռնարկերով միջազգային
փոխադրումները,
Համաձայնեցին հետևյալի մասին՝

ԳԼՈՒԽ I. Ընդհանուր դրույթներ

Հոդված 1

Սույն Կոնվենցիայում.

ա) «Ներմուծման հարկեր և տուրքեր» տերմինը նշանակում է մաքսային տուրքերը
և այն բոլոր տուրքերը, հարկերը, մուծումները և այլ վճարումները, որոնք գանձվում են
բեռների ներմուծման ժամանակ կամ դրա հետ կապված, բացառությամբ այն տուրքերի
և մուծումների, որոնք գումարով սահմանափակված են մինչև տրամադրված
ծառայությունների մոտավոր արժեքը:

բ) «Ժամանակավոր ներմուծում» տերմինը նշանակում է ժամանակավոր
ներմուծում, պայմանով, որ ենթակա է հետարտահանման, ազատված է մաքսային
տուրքերի և հարկերի վճարումից և ներմուծման արգելքների ու սահմանափակումների
կիրառումից:

գ) «Բեռնարկ» տերմինը նշանակում է տրանսպորտային սարքավորում (վանդակ,
հանովի ցիստեռն կամ նմանատիպ հարմարանք), որը՝

- i. իրենից ներկայացնում է ամբողջապես կամ մասամբ փակ տարողություն՝
նախատեսված է իր մեջ բեռ տեղադրելու համար,
- ii. մշտական բնույթի է և հետևաբար բավականին ամուր է, որպեսզի ծառայի
բազմակի օգտագործման համար,
- iii. հատուկ նախագծված է տրանսպորտի մեկ կամ մի քանի տեսակներով
բեռների փոխադրումը հեշտացնելու համար՝ առանց բեռների միջանկյալ
վերաբարձման,
- iv. կառուցված է այնպես, որ հեշտ լինի նրա վերաբարձումը, մասնավորապես
տրանսպորտի մեկ տեսակից մյուսը,
- v. նախագծված է այնպես, որ հեշտությամբ բարձվի և բեռնաթափվի,
- vi. ունի մեկ խորանարդ մետրից ոչ պակաս ներքին ծավալ:

«Բեռնարկ» տերմինը ներառում է բեռնարկի հարմարանքները և
սարքավորումները, որոնք անհրաժեշտ են բեռնարկի տվյալ տեսակի համար,

պայմանով, որ այդպիսի հարմարանքները և սարքավորումները փոխադրվեն բեռնարկղի հետ միասին: «Բեռնարկղ» տերմինը չի ներառում տրանսպորտային միջոցները, տրանսպորտային միջոցների պահեստամասերը կամ փաթեթավորումը: Հանովի թափքերը հավասարեցվում են բեռնարկղերին:

դ) «Ներքին փոխադրումներ» տերմինը նշանակում է բեռների փոխադրում, որոնք բարձրվել են տվյալ պետության տարածքում և ենթակա են բեռնաթափման նույն պետության տարածքում:

դ) բիս. «Մաքսային կամ տնտեսական միություն» տերմինը նշանակում է միություն, որը կազմված է սույն Կոնվենցիայի 18-րդ հոդվածի 1-ին կետում նշված պետություններից, իրավասու է ընդունել սեփական օրենսդրությունը, որը պարտադիր լինի իր անդամների համար, կապված սույն Կոնվենցիայով ղեկավարվող հարցերի հետ, և իրավասու է որոշել միանալ սույն Կոնվենցիային՝ իր ներքին ընթացակարգերի համաձայն:

ե) «Անձ» տերմինը նշանակում է ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձ:

զ) **Բեռնարկղեր «շահագործող ձեռնարկություն»** տերմինը նշանակում է անձ, որը բեռնարկղերի օգտագործման արդյունավետ վերահսկում է իրականացնում՝ անկախ այնհանգամանքից՝ բեռնարկղի սեփականատեր է նա, թե ոչ:

Հոդված 2

Որպեսզի սույն Կոնվենցիայում նախատեսված դրույթները տարածվեն բեռնարկղերի վրա, վերջիններս պետք է տարբերանշվեն 1-ին հավելվածում բերված դրույթների համաձայն:

ԳԼՈՒԽ II. Ժամանակավոր ներմուծում

ա) Ժամանակավոր ներմուծման պայմանները

Հոդված 3

1. 4 – 9-րդ հոդվածներում նշված պայմանների կատարման դեպքում յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ թույլ է տալիս ինչպես բարձրված, այնպես էլ դատարկ բեռնարկղերի ժամանակավոր ներմուծում կատարել:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմն իրեն իրավունք է վերապահում թույլ չտալ այն բեռնարկղերի ժամանակավոր ներմուծում կատարել, որոնք գնման, վարձակալման, լիզինգի կամ նմանօրինակ պայմանագրի առարկա են եղել՝ կատարված իր տարածքում բնակվող կամ մշտական բնակություն ունեցող անձի կողմից:

Հոդված 4

1. Ըստ ժամանակավոր ներմուծման ընթացակարգի՝ ներմուծված բեռնարկերը ենթակա են հետարտահանման երեք ամսվա ընթացքում՝ սկսած դրանց ներմուծման օրվանից: Սակայն այդ ժամկետը կարող է երկարացվել իրավասու մաքսային մարմինների կողմից:

2. Ըստ ժամանակավոր ներմուծման ընթացակարգի՝ ներմուծված բեռնարկերի արտահանումը կարող է իրականացվել ցանկացած իրավասու մաքսատան միջոցով, նույնիսկ այն դեպքում, եթե այդ մաքսատունը չի հանդիսանում այն մաքսատունը, որի միջոցով կատարվել է ժամանակավոր ներմուծումը:

Հոդված 5

1. Չնայած արտահանմանը վերաբերող 4-րդ հոդվածի 1-ին կետի պահանջին՝ լուրջ վնասված բեռնարկերի դեպքում այդ պահանջը չի կիրառվի այն պայմանով, որ տվյալ երկրի կանոնների համաձայն և այնքանով, որքանով որ նրա մաքսային մարմինների կողմից թույլատրվում է, բեռնարկերը՝

ա) ենթակա են ներմուծման հարկերի և տուրքերի, որոնք նրանց համար կգանձվեն ներկայացվելու պահին և հաշվի առնելով այն վիճակը, որով նրանք ներկայացվել են, կամ

բ) անհատույց փոխանցվել են այդ երկրի իրավասու մարմիններին, կամ

գ) ոչնչացվել են պաշտոնական հսկողության ներքո շահագրգիռ կողմերի հաշվին, ընդ որում անվնաս մնացած մասերի կամ նյութերի համար կգանձվեն ներմուծման հարկեր և տուրքեր, որոնց նրանք ենթակա են այն ներկայացվելու և հաշվի առնելով այն վիճակը, որով նրանք ներկայացվել են:

2. Եթե ժամանակավոր ներմուծման ընթացակարգի համաձայն ներմուծված բեռնարկերը չի կարող արտահանվել կալանքի պատճառով, ապա 4-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված արտահանման պահանջի կատարումը կալանքի ժամանակահատվածում դադարեցվում է:

բ) Ժամանակավոր ներմուծման ընթացակարգը

Հոդված 6

Չխախտելով 7-րդ և 8-րդ հոդվածների դրույթները՝ սույն Կոնվենցիայի դրույթների համաձայն ժամանակավորապես ներմուծված բեռնարկերի նկատմամբ կիրառվում է ժամանակավոր ներմուծման ռեժիմը՝ նրանց ներմուծման և արտահանման ժամանակ առանց մաքսային փաստաթղթերի, ինչպես նաև առանց երաշխիքների ներկայացման:

Հոդված 7

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է պահանջել, որպեսզի բեռնարկերի ժամանակավոր ներմուծման ժամանակ կատարվեն 2-րդ հավելվածում նշված բեռնարկերի ժամանակավոր ներմուծմանը վերաբերող բոլոր ընթացակարգերը կամ դրանց մի մասը:

Հոդված 8

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ այն դեպքերում, երբ 6-րդ հոդվածի դրույթները չեն կարող կիրառվել, իրեն իրավունք է վերապահում պահանջել որևէ տեսակի երաշխիք և/կամ բեռնարկի ներմուծման կամ արտահանման մաքսային փաստաթղթեր:

զ) Ժամանակավոր ներմուծման ընթացակարգի համաձայն ներմուծված բեռնարկերի օգտագործման պայմանները

Հոդված 9

1. Պայմանավորվող կողմերը թույլ են տալիս բեռների ներքին փոխադրումների համար օգտագործել այն բեռնարկերը, որոնք ներմուծվում են ժամանակավոր ներմուծման ընթացակարգի կիրառմամբ, սույն Կոնվենցիայի դրույթների համաձայն, և այդ դեպքում յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրավունք ունի կիրառել 3-րդ հավելվածում նշված բոլոր կամ որոշ պայմանները:

2. Դրույթը, որը նախատեսված է 1-ին կետում, կիրառվում է առանց խախտելու յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի տարածքում գործող կանոնները այն տրանսպորտային միջոցների վերաբերյալ, որոնք քարշարկում կամ փոխադրում են բեռնարկերը:

դ) Հատուկ դեպքեր

Հոդված 10

1. Թույլատրվում է պահեստամասերի ժամանակավոր ներմուծում կատարել, որոնք նախատեսված են ժամանակավոր ներմուծված բեռնարկղերի վերանորոգման համար:

2. Չարտահանված փոխարինված մասերը շահագրգիռ երկրի կանոնների համաձայն և այնքանով, որքանով թույլատրվում է այդ երկրի մաքսային մարմինների կողմից՝

ա) ենթակա կլինեն ներմուծման հարկերիև տուրքերի, որոնք կգանձվեն նրանց համար ներկայացվելու պահին և հաշվի առնելով այն վիճակը, որով նրանք ներկայացվել են, կամ

բ) անհատույց կփոխանցվեն այդ երկրի իրավասու մարմիններին, կամ

գ) կոչնչացվեն պաշտոնական հսկողության ներքո, շահագրգիռ կողմերի հաշվին:

3. 6-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածների դրույթները համապատասխան փոփոխություններով կկիրառվեն պահեստամասերի ժամանակավոր ներմուծման նկատմամբ, որը նախատեսված է 1-ին կետում:

Հոդված 11

1. Պայմանավորվող կողմերը համաձայնվեցին թույլ տալ ժամանակավոր ներմուծված բեռնարկղերի հարմարանքների (պիտույքների) և սարքավորումների ժամանակավոր ներմուծում կատարել, որոնք կա՛մ ներմուծվում են բեռնարկղերի հետ միասին և արտահանվում են առանձին կամ այլ բեռնարկղի հետ միասին, կա՛մ ներմուծվում են առանձին և արտահանվում բեռնարկղի հետ:

2. 3-րդ հոդվածի 2-րդ կետի և 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածների դրույթները համապատասխան փոփոխություններով կկիրառվեն 1-ին կետում հիշատակված բեռնարկղերի հարմարանքների և սարքավորումների ժամանակավոր ներմուծման նկատմամբ: Այդ հարմարանքները և սարքավորումները կարող են օգտագործվել ներքին փոխադրումներում և 9-րդ հոդվածի 1-ին կետի դրույթների համաձայն, երբ դրանք փոխադրվեն այն բեռնարկղի հետ միասին, որի վրա տարածվում է նշված կետի դրույթները:

ԳԼՈՒԽ III – Մաքսային կնիքներով և կապարակնիքներով փոխադրումներ

կատարելու համար բեռնարկղերի թույլտվությունը

Հոդված 12

1. Մաքսային կնիքներով և կապարակնիքներով փոխադրումներ կատարելու թույլտվություն ստանալու համար բեռնարկերը պետք է համապատասխանեն 4-րդ հավելվածում շարադրված կանոնների դրույթներին:

2. Թույլտվությունը կատարվում է 5-րդ հավելվածում նախատեսված ընթացակարգերից մեկի համաձայն:

3. Որևէ Պայմանավորվող կողմի կողմից մաքսային կնիքներով և կապարակնիքներով բեռների փոխադրումներ կատարելու համար թույլատրված բեռնարկերը մաքսային կնիքներով և կապարակնիքներով միջազգային փոխադրումների ցանկացած ռեժիմի դեպքում կընդունեն ուրիշ Պայմանավորվող կողմերը:

4. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրեն իրավունք է վերապահում չընդունել այն թույլատրված բեռնարկերի վավերականությունը, որոնք չեն բավարարում 4-րդ հավելվածում նշված պայմանները: Այնուամենայնիվ Պայմանավորվող կողմերը պետք է խուսափեն փոխադրումը ձգձգելուց, եթե գտնված թերությունները մեծ կարևորություն չունեն և մաքսանենգության հնարավորություն չեն տալիս:

5. Մաքսային կնիքներով և կապարակնիքներով բեռների փոխադրման համար ցանկացած բեռնարկ, որի թույլտվության վկայականը այլևս չի ընդունվում, կրկնակի օգտագործումից առաջ կա՛ն պետք է բերվի համապատասխան վիճակի, որը հիմք է հանդիսանում նրա թույլատրման համար, կա՛ն նորից թույլատրման ընթացակարգ անցնի:

6. Երբ հայտնաբերվում է, որ որևէ թերություն գոյություն է ունեցել բեռնարկի թույլատրման գործընթացի ժամանակ, թույլատրման համար պատասխանատու իրավասու մարմինը այդ մասին տեղեկացվում է:

7. Եթե հայտնաբերվում է, որ 5-րդ հավելվածի 1-ին կետի ա) և բ) ենթակետերում նկարագրված ընթացակարգերի համաձայն մաքսային կնիքներով և կապարակնիքներով բեռների փոխադրման համար թույլատրված բեռնարկերը իրականում չեն համապատասխանում 4-րդ հավելվածի տեխնիկական պայմաններին, ապա թույլտվությունը տրամադրած իրավասու մարմինը միջոցներ է ձեռք առնում, որոնք անհրաժեշտ են բեռնարկերը պահանջվող տեխնիկական պայմաններին համապատասխանեցնելու համար, կամ չեղյալ է համարում թույլտվությունը:

ԳԼՈՒԽ IV. Բացատրական գրառումներ

Հոդված 13

Բացատրական գրառումները, որոնք շարադրված են 6-րդ հավելվածում, պարունակում են սույն Կոնվենցիայի և նրա հավելվածների որոշ դրույթների բացատրություններ:

ԳԼՈՒԽ V. Այլ դրույթներ

Հոդված 14

Սույն Կոնվենցիան չի խոչընդոտում ավելի արտոնյալ պայմանների կիրառումը, որոնք Պայմանավորվող կողմերը տրամադրում են կամ ցանկություն ունեն տրամադրել ինչպես միակողմանի որոշման, այնպես էլ երկկողմանի կամ բազմակողմանի համաձայնագրերի հիման վրա, պայմանով, որ այդ կերպ տրամադրված արտոնությունները չեն խոչընդոտի սույն Կոնվենցիայի դրույթների կիրառումը:

Հոդված 14 բիս

1. Սույն Կոնվենցիայի նպատակների համար մաքսային կամ տնտեսական միություն կազմավորող Պայմանավորվող կողմերի տարածքները կարող են դիտվել մեկ տարածք:

2. Սույն Կոնվենցիան ոչնչով չի խանգարի մաքսային կամ տնտեսական միություն կազմավորող Պայմանավորվող կողմերին հատուկ դրույթներ կիրառել, որոնք վերաբերեն ժամանակավոր ներմուծման գործընթացներին և մաքսային կնիքներով ու կապարակնիքներով փոխադրումներ կատարելու համար բեռնարկղերի թույլտվությանը այդ միության տարածքում, պայմանով, որ այդ դրույթները չեն նվազեցնի սույն Կոնվենցիայով ապահովվող հնարավորությունները:

Հոդված 15

Սույն Կոնվենցիայի դրույթների ցանկացած խախտում, ցանկացած կեղծիք, սուտ հայտարարություն կամ սույն Կոնվենցիայի դրույթներից բխող արտոնությունները որևէ անձի կամ առարկայի վրա տարածելու նպատակ հետապնդող գործողություն, կարող են պատժամիջոցների կիրառման հանգեցնել այն երկրում, որտեղ այդ օրինախախտումը կատարվել է այդ երկրի օրենքների համաձայն:

Հոդված 16

Պայմանավորվող կողմերը համապատասխան պահանջի առկայության դեպքում միմյանց տրամադրում են սույն Կոնվենցիայի դրույթների կիրառման համար անհրաժեշտ տեղեկատվություն, մասնավորապես բեռնարկերի թույլատրմանը վերաբերող, ինչպես նաև դրանց կառուցվածքի տեխնիկական բնութագրերին վերաբերող տեղեկություններ:

Հոդված 17

Սույն Կոնվենցիայի հավելվածները և ստորագրման արձանագրությունը սույն Կոնվենցիայի անբաժանելի մասն են:

ԳԼՈՒԽ VI. – Վերջնական դրույթներ

Հոդված 18

Ստորագրումը, վավերացումը, ընդունումը, հաստատումը և միացումը

1. Սույն Կոնվենցիան մինչև 1973թ. հունվարի 15-ը ՄԱԿ-ի ժնկյան գրասենյակում և այնուհետև 1973թ. փետրվարի 1-ից մինչև 1973թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ Նյու Յորքում՝ ՄԱԿ-ի կենտրոնատեղիում, բաց է ստորագրման համար ՄԱԿ-ի բոլոր անդամ – պետությունների կողմից կամ ցանկացած մասնագիտացված ձեռնարկության կամ Ատոմային էներգետիկայի միջազգային գործակալության կողմից, կամ Միջազգային դատարանի կանոնադրության մասնակիցների կողմից, ինչպես նաև ցանկացած այլ պետության, որը հրավիրվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից դառնալու սույն Կոնվենցիայի մասնակից:

2. Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման այն ստորագրող պետությունների կողմից:

3. Սույն Կոնվենցիան բաց է նրան միանալու համար 1-ին կետում նշված ցանկացած պետության կողմից:

3 բիս. Մաքսային կամ տնտեսական միությունը, ինչպես սահմանված է 1-ին հոդվածի դ)բիս կետում, կարող է միանալ սույն Կոնվենցիային և դառնալ Պայմանավորվող կողմ: Այդպիսի մաքսային կամ տնտեսական միությունը սույն Կոնվենցիային միանալիս պետք է տեղեկացնի ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին իր իրավասության մասին և տեղյակ պահի սույն Կոնվենցիայով ղեկավարվող հարցերի հետ կապված հետագա որևէ փոփոխության մասին: Մաքսային կամ տնտեսական

միությունը, որը սույն Կոնվենցիայի Պայմանավորվող կողմ է, իր իրավասության շրջանակներում եղող հարցերի վերաբերյալ կիրականացնի իր իրավունքները և կկատարի իր պարտավորությունները, որոնք սույն Կոնվենցիան դնում է իր այն անդամների վրա, որոնք սույն Կոնվենցիայի Պայմանավորվող կողմեր են հանդիսանում: Այդ դեպքում տվյալ անդամները լիազորված չեն լինի անհատապես իրականացնելու այս իրավունքները, ներառյալ ձայնի իրավունքը, փոփոխություններ առաջարկելը, առաջարկված փոփոխությունները մերժելը և, 25-րդ հոդվածի համաձայն, վեճերը հարթելը:

4. Վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման փաստաթղթերը պահպանման համար փոխանցվում են ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին:

Հոդված 19

Ուժի մեջ մտնելը

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման հինգերորդ փաստաթուղթը պահպանման հանձնելու օրվանից սկսած ինը ամիս հետո:

2. Յուրաքանչյուր պետության համար, որը սույն Կոնվենցիան վավերացնում, ընդունում, հաստատում է կամ միանում է դրան, կամ ցանկացած պետության կամ մաքսային կամ տնտեսական միության համար վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման հինգերորդ փաստաթուղթը պահպանման հանձնելուց հետո սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այդ պետության կամ մաքսային կամ տնտեսական միության կողմից իր վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման փաստաթուղթը պահպանման հանձնելու օրվանից սկսած վեց ամիս հետո:

3. Սույն Կոնվենցիայում կատարված փոփոխությունները ուժի մեջ մտնելուց հետո պահպանման հանձնված վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման ցանկացած փաստաթուղթ կհամարվի Կոնվենցիայի փոփոխված տեքստ:

4. Համարվում է, որ ցանկացած այդպիսի փաստաթուղթ, որը պահպանման է հանձնվել փոփոխությունը ընդունելուց հետո, բայց մինչ նրա ուժի մեջ մտնելը, վերաբերում է Կոնվենցիայի փոփոխված տեքստին՝ այդ փոփոխության ուժի մեջ մտնելու օրվանից:

Հոդված 20

Բեռնարկղերի վերաբերյալ մաքսային կոնվենցիայի (1956թ.) գործողության
դադարեցումը

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելու պահից չեղյալ է համարվում և փոխարինվում սույն Կոնվենցիայի մասնակիցների հարաբերություններում գործող Բեռնարկղերին վերաբերող մաքսային կոնվենցիան, որը բաց էր ստորագրման համար Ժնևում 1956թ. մայիսի 18-ից:

2. 12-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերի դրույթները չխախտելով, Բեռնարկղերին վերաբերող մաքսային կոնվենցիայի (1956թ.) դրույթների կամ դրանցից բխող համաձայնագրերի համաձայն, որոնք կնքվել են ՄԱԿ-ի հովանու ներքո, փոխադրման թույլտվություն ստացած բեռնարկղերը ընդունվում են ցանկացած Պայմանավորվող կողմի կողմից մաքսային կնիքներով և կապարակնիքներով բեռների փոխադրում կատարելու համար, եթե դրանք համապատասխանում են այն պայմաններին, որոնց համաձայն դրանք սկզբում թույլատրվել են փոխադրում կատարելու համար: Այդ նպատակով այն թույլտվության վկայականները, որոնք տրամադրվել են Բեռնարկղերին վերաբերող մաքսային կոնվենցիայի (1956թ.) դրույթների համաձայն, կարող են փոխարինվել թույլատրման ցուցանակով մինչև այդ վկայականների գործողության ժամկետը լրանալը:

Հոդված 21

Սույն Կոնվենցիայում և նրա հավելվածներում փոփոխություններ մտցնելու ընթացակարգը

1. Ցանկացած Պայմանավորվող կողմ կարող է առաջարկել մեկ կամ ավելի փոփոխություններ սույն Կոնվենցիայում: Ցանկացած առաջարկվող փոփոխության տեքստ պետք է փոխանցվի Մաքսային համագործակցության խորհրդին, որը այն ուղարկում է բոլոր Պայմանավորվող կողմերին և տեղեկացնում է այդ մասին 18-րդ հոդվածում նշված պետություններին, որոնք Պայմանավորվող կողմեր չեն հանդիսանում: Մաքսային համագործակցության խորհուրդը, 7-րդ հավելվածում շարադրված ընթացակարգի կանոնների համաձայն, պետք է նաև Ադմինիստրատիվ կոմիտեի նիստ գումարի:

2. Նախորդ կետի համաձայն առաջարկված կամ կոմիտեի նիստին մշակված և կոմիտեի նիստին ներկա և քվեարկող երկու երրորդ մեծամասնության կողմից ընդունված ցանկացած փոփոխություն ուղարկվում է ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին:

3. ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը փոփոխության տեքստը ուղարկում է բոլոր Պայմանավորվող կողմերին ընդունման համար, ինչպես նաև տեղեկացման համար՝ 18-րդ հոդվածում նշված պետություններին, որոնք Պայմանավորվող կողմեր չեն հանդիսանում:

4. Ցանկացած առաջարկված փոփոխություն, որի մասին տեղեկացվում է նախորդ կետի համաձայն, համարվում է ընդունված, եթե առաջարկվող փոփոխության տեքստը Գլխավոր քարտուղարի կողմից ուղարկվելու օրվանից սկսած 12-ամսյա ժամկետում ոչ մի Պայմանավորվող կողմ դրա դեմ առարկություն չի ներկայացնում:

5. ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը հնարավոր կարճ ժամկետում բոլոր Պայմանավորվող կողմերին և 18-րդ հոդվածում նշված պետություններին, որոնք Պայմանավորվող կողմեր չեն հանդիսանում, տեղեկացնում է այն մասին, թե հայտարարվել է արդյոք առարկություն առաջարկված փոփոխության վերաբերյալ: Եթե առաջարկված փոփոխության վերաբերյալ առարկության մասին տեղեկացվում է ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին, ապա փոփոխությունը համարվում է չընդունված, և այդ առումով ոչ մի միջոց չի ձեռնարկվում: Եթե այդպիսի առարկության մասին ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը չի տեղեկացվում, ապա փոփոխությունը ուժի մեջ է մտնում բոլոր Պայմանավորվող կողմերի համար նախորդ կետում նշված 12-ամսյա ժամկետը լրանալուց երեք ամիս հետո, կամ այնպիսի ավելի ուշ ժամկետում, որը որոշվում է Ադմինիստրատիվ կոմիտեի կողմից դրա ընդունման պահին:

6. Ցանկացած Պայմանավորվող կողմ կարող է, ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին ծանուցում ուղարկելով, խնդրանք ներկայացնել սույն Կոնվենցիայի վերանայման համար կոնֆերանս հրավիրելու մասին: ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը այդ խնդրանքի մասին հայտնում է բոլոր Պայմանավորվող կողմերին և Կոնվենցիայի վերանայման նպատակով կոնֆերանս է հրավիրում, եթե իր հայտնելուց հետո 4-ամսյա ժամկետում Պայմանավորվող կողմերից առնվազն մեկ երրորդը նրան տեղեկացնում է այդպիսի խնդրանքի հետ նրանց համաձայնության մասին: Այդ կոնֆերանսը հրավիրվում է նաև ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի կողմից Ադմինիստրատիվ կոմիտեից համապատասխան խնդրանք ստանալուն պես: Ադմինիստրատիվ կոմիտեն այդպիսի խնդրանք է ներկայացնում համապատասխան որոշման առկայության դեպքում, որը ընդունվում է Կոմիտեում ներկա և քվեարկող մեծամասնության կողմից: Եթե կոնֆերանսը գումարվում է սույն կետի համաձայն, ապա ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը կոնֆերանսին մասնակցելու է հրավիրում 18-րդ հոդվածում նշված բոլոր պետություններին:

Հոդված 22

1-ին, 4-րդ, 5-րդ և 6-րդ հավելվածներում փոփոխություններ մտցնելու
հատուկ ընթացակարգը

1. Անկախ փոփոխություններ մտցնելու ընթացակարգից՝ շարադրված 21-րդ հոդվածում, 1-ին, 4-րդ, 5-րդ և 6-րդ հավելվածներում կարող են փոփոխություններ կատարվել, ինչպես որ նախատեսված է սույն հոդվածով, և 7-րդ հավելվածում շարադրված ընթացակարգի կանոնների համաձայն:

2. Ցանկացած Պայմանավորվող կողմ փոփոխություն կատարելու առաջարկությունը ուղարկում է Մաքսային համագործակցության խորհրդին: Մաքսային համագործակցության խորհուրդը այդ մասին տեղեկացնում է Պայմանավորվող կողմերին և 18-րդ հոդվածում հիշատակված պետություններին, որոնք Պայմանավորվող կողմ չեն հանդիսանում, և հրավիրում է Ադմինիստրատիվ կոմիտեի նիստ:

3. Նախորդ կետի համաձայն առաջարկված կամ Կոմիտեի նիստին մշակված և Կոմիտեում ներկա ու քվեարկող երկու երրորդ մեծամասնության կողմից ընդունված ցանկացած փոփոխություն ուղարկվում է ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին:

4. ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը փոփոխությունը ուղարկում է Պայմանավորվող կողմերին՝ այն ընդունելու համար, ինչպես նաև տեղեկության համար՝ 18-րդ հոդվածում հիշատակված պետություններին, որոնք Պայմանավորվող կողմեր չեն հանդիսանում:

5. Փոփոխությունը համարվում է ընդունված, եթե մեկ հինգերորդ կամ հինգ Պայմանավորվող կողմեր, ընդ որում ընդունվում է այդ թվերի փոքրագույնը, ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին 12 ամսվա ընթացքում՝ սկսած ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի կողմից բոլոր Պայմանավորվող կողմերին առաջարկվող փոփոխությունը ուղարկվելու պահից, չեն տեղեկացնում այն մասին, որ իրենք առարկում են այդ առաջարկությանը: Առաջարկվող փոփոխության վերաբերյալ, որը չի ընդունվում, որևէ միջոցառում չի նախատեսվում:

6. Եթե փոփոխությունը ընդունվում է, ապա այն ուժի մեջ է մտնում բոլոր Պայմանավորվող կողմերի համար, որոնք առարկություն չեն հայտարարել տվյալ առաջարկվող փոփոխության դեմ, երեք ամիս անց՝ սկսած նախորդ կետում հիշատակված 12-ամսյա ժամկետի լրանալուց հետո կամ այնպիսի ավելի ուշ ժամկետում, որը որոշում է Ադմինիստրատիվ կոմիտեն փոփոխությունը ընդունելու պահին: Փոփոխության ընդունման պահին Կոմիտեն կարող է նաև որոշել, որ անցումային ժամանակահատվածում գոյություն ունեցող հավելվածները ուժի մեջ կլինեն ամբողջությամբ կամ մասնակի այդպիսի փոփոխության հետ զուգընթաց:

7. ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը փոփոխությունը ուժի մեջ մտնելու ամսաթվի մասին տեղեկացնում է Պայմանավորվող կողմերին, ինչպես նաև 18-րդ հոդվածում հիշատակված պետություններին, որոնք Պայմանավորվող կողմեր չեն հանդիսանում:

Չեղյալ հայտարարելը

Ցանկացած Պայմանավորվող կողմ կարող է չեղյալ հայտարարել սույն Կոնվենցիան՝ ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին համապատասխան փաստաթուղթ ի պահ հանձնելու միջոցով: Չեղյալ հայտարարումը ուժի մեջ է մտնում ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին այդ փաստաթուղթը ի պահ հանձնելու օրվանից սկսած՝ մեկ տարին լրանալուն պես:

Հոդված 24

Գործողության դադարեցումը

Սույն Կոնվենցիան կորցնում է իր ուժը, եթե Պայմանավորվող կողմերի քանակը կազմում է հինգից պակաս՝ հաջորդական տասներկու ամսվա որևէ ժամանակահատվածում:

Հոդված 25

Վեճերի լուծումը

1. Երկու կամ ավելի Պայմանավորվող կողմերի միջև ծագած ցանկացած վեճ՝ կապված սույն Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման հետ, որը չի կարող լուծվել բանակցությունների կամ կարգավորման այլ միջոցներով, նրանցից մեկի պահանջով փոխանցվում է արբիտրաժային դատարանին, որը կազմված է հետևյալ կերպ. վեճի յուրաքանչյուր մասնակից նշանակում է արբիտր, և այդ երկու արբիտրները նշանակում են երրորդ արբիտրին, որը նախագահ է հանդիսանում: Եթե պահանջը ստանալու օրվանից սկսած երեք ամիս հետո մասնակիցներից մեկը չի կարողանում նշանակել արբիտրին կամ արբիտրները չեն կարողանում ընտրել նախագահին, ապա մասնակիցներից յուրաքանչյուրը կարող է դիմել ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին՝ խնդրելով նշանակել արբիտր կամ արբիտրաժային դատարանի նախագահ:

2. 1-ին կետի դրույթների համաձայն նշանակված արբիտրաժային դատարանի որոշումը պարտադիր ուժ ունի վեճի մասնակիցների համար:

3. Արբիտրաժային դատարանը հաստատում է ընթացակարգի իր կանոնները:

4. Արբիտրաժային դատարանի որոշումները իր ընթացակարգի և նիստի անցկացման վայրի, ինչպես նաև իր կողմից քննվող ցանկացած վեճի վերաբերյալ ընդունվում են ձայների մեծամասնությամբ:

5. Ցանկացած վեճ, որ կարող է առաջանալ վեճի մասնակիցների միջև որոշման մեկնաբանման և կատարման վերաբերյալ, կարող է փոխանցվել մասնակիցներից յուրաքանչյուրի կողմից այն արբիտրաժային դատարանի քննությանը, որը այդ որոշումը կայացրել է:

Հոդված 26

Վերապահումներ

1. Սույն Կոնվենցիայի նկատմամբ թույլատրվում է վերապահումներ կատարել, բացառությամբ այն վերապահումների, որոնք վերաբերում են 2-8-րդ, 12-17-րդ, 20-րդ, 25-րդ հոդվածներին և սույն հոդվածին, ինչպես նաև բացառությամբ այն վերապահումների, որոնք վերաբերում են հավելվածների պարունակած դրույթներին, պայմանով, որ այդ վերապահումները ներկայացվեն գրավոր ձևով, և եթե դրանք ներկայացվել են մինչև վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման մասին փաստաթուղթը պահպանմանը հանձնելը, հաստատված լինեն այդ փաստաթղթում: ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը այդ վերապահումները ուղարկում է 18-րդ հոդվածում նշված բոլոր պետություններին:

2. Ցանկացած վերապահում, որ կատարվում է 1-ին կետի համաձայն՝

ա) այդպիսի վերապահում կատարած Պայմանավորվող կողմի համար, այդ վերապահման շրջանակներում, փոխում է սույն Կոնվենցիայի այն դրույթները, որոնց վերաբերում է այդ վերապահումը, և

բ) նման ձևով այդ դրույթները փոխում է և այլ Պայմանավորվող կողմերի համար՝ այդ վերապահումը կատարած Պայմանավորվող կողմի հետ նրանց ունեցած փոխհարաբերություններում:

3. Ցանկացած Պայմանավորվող կողմ, որը 1-ին կետի համաձայն վերապահում է ներկայացրել, կարող է ցանկացած ժամանակ հանել այն ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին ծանուցագիր ուղարկելու միջոցով:

Հոդված 27

Ծանուցումներ

21-րդ, 22-րդ և 26-րդ հոդվածներում նախատեսված ծանուցումներից և հաղորդագրություններից բացի՝ ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը 18-րդ հոդվածում նշված բոլոր պետություններին հայտնում է՝

ա) 18-րդ հոդվածի համաձայն կատարված ստորագրումների, վավերացումների, ընդունումների, հաստատումների և միացումների մասին,

բ) 19-րդ հոդվածի համաձայն սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելու օրերի մասին,

գ) 21-րդ և 22-րդ հոդվածների համաձայն սույն **Համաձայնագրի** փոփոխությունները ուժի մեջ մտնելու օրվա մասին,

դ) 23-րդ հոդվածի համաձայն չեղյալ հայտարարելու մասին,

ե) 24-րդ հոդվածի համաձայն սույն Կոնվենցիան ուժը կորցնելու մասին:

Հոդված 28

Հավասարագոր տեքստեր

Սույն Կոնվենցիայի բնօրինակը, որի անգլերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն տեքստերը հավասարագոր են համարվում, պահպանման է հանձնվում ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին, որը պատշաճ կերպով վավերացված օրինակները ուղարկում է 18-րդ հոդվածում նշված բոլոր պետություններին:

Ի հաստատումն որի, ներքոստորագրյալ լիազոր ներկայացուցիչները, իրենց կառավարությունների կողմից պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարված է Ժնևում հազար ինը հարյուր յոթանասուներկու թվականի դեկտեմբերի երկուսին:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Բեռնարկղերի համապատասխան և հստակ երևացող տեղում պետք է ամուր կերպով դրոշմվեն հետևյալ տվյալները՝

ա) սեփականատիրոջ կամ հիմնական բեռնարկղը շահագործող ձեռնարկության տարբերակիչ տվյալները,

բ) բեռնարկղի տարբերակիչ նշանները և համարները, որը շնորհիվ է սեփականատիրոջ կամ բեռնարկղը շահագործող ձեռնարկության կողմից, և

գ) բեռնարկղի քաշը, ներառյալ դրա բոլոր մշտական ֆիքսված սարքավորումները:

2. Երկիրը, որին պատկանում է բեռնարկղը, կարող է նշվել կա՛մ ամբողջությամբ, կա՛մ ISO ալֆա-2 երկրի կոդով, համաձայն ISO 3166 Միջազգային չափանիշի, կամ միջազգային ավտոտրանսպորտային փոխադրումների ժամանակ օգտագործվող ավտոտրանսպորտային միջոցի գրանցման երկիրը նշելու համար օգտագործվող տարբերակիչ նշանով: Յուրաքանչյուր երկիր կարող է բեռնարկղերի վրա օգտագործել իր անվանումը կամ տարբերակիչ նշանը՝ համաձայն իր ազգային օրենսդրության: Սեփականատիրոջ կամ բեռնարկղը շահագործող ձեռնարկության ինքնությունը կարող է ցույց տրվել կա՛մ իր լրիվ անվանումով, կա՛մ սկզբնատառերով, պայմանով, որ վերջինս ապահովի ընդունված տարբերակիչ նշանները՝ բացառելով այնպիսի խորհրդանիշեր, ինչպիսիք են **խորհրդանշանները**/գինանշանները կամ դրոշմները:

3. Մաքսային կնիքներով և կապարակնիքներով փոխադրումներ կատարելու համար թույլատրված բեռնարկղերը պետք է նաև հետևյալ մանրամասները ունենան, որոնք նույնպես պետք է նշվեն թույլատրման ցուցանակի վրա՝ 5-րդ հավելվածի դրույթների համաձայն.

ա) արտադրող գործարանի հերթական համարը (գործարանային համարը), և

բ) եթե նրանք թույլատրվել են ըստ կառուցվածքի տեսակի՝ տեսակի տարբերակիչ համարները կամ տառերը:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՍՈՒՅՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 7-րդ ՀՈԴՎԱԾՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Սույն Կոնվենցիայի 7-րդ հոդվածի դրույթները կիրառելու նպատակով յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ժամանակավոր ներմուծման թույլտվություն ստացած բեռնարկղերի շարժը ստուգելու համար օգտագործում է սեփականատիրոջ, բեռնարկղը շահագործող ձեռնարկության կամ նրանց ներկայացուցիչների կողմից գրանցված շարժերը:

2. Կիրառվում են հետևյալ դրույթները՝

ա) բեռնարկղերի սեփականատերը կամ բեռնարկղը շահագործող ձեռնարկությունը պետք է ներկայացուցիչ ունենա այն երկրում, որտեղ բեռնարկղերը պետք է ժամանակավոր ներմուծման թույլտվություն ստանան,

բ) սեփականատերը, բեռնարկղը շահագործող ձեռնարկությունը կամ նրանց ներկայացուցիչները գրավոր կերպով պարտավորվում են

- i) տվյալ երկրի մաքսային մարմիններին, նրանց պահանջով, տրամադրել մանրամասն տեղեկություններ ժամանակավոր ներմուծման թույլտվություն ստացած յուրաքանչյուր բեռնարկղի շարժի մասին, ներառյալ տվյալ երկիր մուտքի և ելքի ամսաթվերը և վայրերը,
- ii) վճարել այնպիսի ներմուծման հարկեր և տուրքեր, ինչպիսիք կարող են պահանջվել այն դեպքում, երբ ժամանակավոր ներմուծման պայմանները չեն կատարվի:

ՀԱՎԵԼՎԱԾ 3

ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՆԵՐՔԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ լիազորված է հետևյալ պայմանները կիրառել իր տարածքում, սույն Կոնվենցիայի 9-րդ հոդվածի համաձայն, ներքին փոխադրումների համար բեռնարկղերի օգտագործման հանդեպ.

ա) փոխադրումը պետք է բեռնարկղը խելամիտ ուղիղ ճանապարհով բերի այն վայրը կամ դրան մոտիկ, որտեղ արտահանման բեռը պետք է բարձվի կամ որտեղից բեռնարկղը պետք է դատարկ հետ արտահանվի,

բ) ներքին փոխադրումների համար բեռնարկղը նախքան հետ արտահանվելը պետք է օգտագործվի միայն մեկ անգամ:

ՀԱՎԵԼՎԱԾ 4

ՄԱՔՍԱՅԻՆ ԿՆԻՔՆԵՐՈՎ ԵՎ ԿԱՊԱՐԱԿՆԻՔՆԵՐՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՂ ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Հոդված 1

Հիմնական սկզբունքները

Մաքսային կնիքներով և կապարակնիքներով միջազգային փոխադրումներ կատարելու համար կարող են թույլատրվել միայն այն բեռնարկերը, որոնք կառուցված և սարքավորված են այնպես, որ՝

- ա) հնարավոր չլինի բեռը մտցնել կամ հանել բեռնարկի կնքված մաս կամ մասից՝ առանց մաքսային կնիքների և կապարակնիքների վնասման տեսանկյունից հետք թողնելու,
- բ) մաքսային կնիքները և կապարակնիքները հնարավոր լինի դնել պարզ և արդյունավետ կերպով,
- գ) նրանցում ոչ մի տեղ չլինի բեռը թաքցնելու համար,
- դ) այն տարածքը, որտեղ տեղադրվում է բեռը, հեշտ հասանելի լինի մաքսային ստուգման համար:

Հոդված 2

Բեռնարկերի կառուցվածքը

1. Սույն Կանոնների 1-ին հոդվածի պահանջները բավարարելու համար.

ա) Բեռնարկի բաղկացուցիչ տարրերը (պատերը, հատակը, դռները, տանիքը, կանգնակները, շրջանակները, լայնակի հեծանները և այլն) պետք է միացվեն կա՛մ այն հարմարանքներով, որոնք չեն կարող հանվել դրսից և նորից դրվել տեղը՝ առանց տեսանելի հետքեր թողնելու, կա՛մ այն մեթոդներով, որոնք ապահովում են այնպիսի կառուցվածք, որը չի կարող փոխվել՝ առանց տեսանելի հետքեր թողնելու: Եթե պատերը, հատակը, դռները և տանիքը պատրաստված են տարբեր նյութերից, դրանք պետք է համապատասխանեն նույնպիսի պահանջների և բավականաչափ ամուր լինեն:

բ) Դռները և փակման այլ համակարգերը (ներառյալ փականները, մտոցների խուփերը, կցեզրերը և այլն) պետք է ունենան հարմարանքներ, որոնց վրա կարող են տեղադրվել մաքսային կնիքներ և կապարակնիքներ: Այդ հարմարանքները պետք է լինեն այնպիսին, որ անհնար լինի դրանք հանել դրսից և նորից տեղը դնել՝ առանց

տեսանելի հետքեր թողնելու, և դռներն ու փակող սարքերը անհնար լինի բացել՝ առանց մաքսային կնիքների և կապարակնիքների վնասման: Վերջիններս պետք է համապատասխան կերպով պաշտպանված լինեն: Թույլատրվում են բացվող տանիքները:

գ) Օդափոխման և դրենաժային անցքերը պետք է հարմարանք ունենան, որը խոչընդոտի բեռնարկը մուտք գործելը: Այդ հարմարանքը պետք է լինի այնպիսի կառուցվածքի, որ անհնար լինի այն հանել դրսից և նորից դնել տեղը՝ առանց տեսանելի հետքեր թողնելու:

2. Չնայած սույն Կանոնների 1-ին հոդվածի «գ» ենթակետի դրույթներին՝ թույլատրվում է բեռնարկի բաղկացուցիչ տարրեր ունենալ, որոնք գործնական նկատառումներով ներառեն դատարկ տարածություններ (օրինակ՝ կրկնակի պատերի բաղկացուցիչ մասերի միջև): Բայց որպեսզի այդ տարածությունները անհնար լինի օգտագործել բեռների թաքցնելու համար՝

i) եթե այն ծածկում է ամբողջ բարձրությունը հատակից մինչև տանիք, կամ եթե նրա և արտաքին պատի միջև եղած տարածությունը ամբողջովին փակված է, բեռնարկի ներքին երեսապատումը չպետք է հնարավոր լինի հանել և նորից տեղը դնել՝ առանց տեսանելի հետքեր թողնելու, և

ii) եթե երեսպատումը ամբողջ բարձրությունը չի ծածկում, և երեսպատման ու արտաքին պատի միջև տարածությունը ամբողջությամբ փակված չէ, և բոլոր այլ դեպքերում, երբ դատարկ տարածություններ են առաջացել բեռնարկի կառուցվածքում, այդպիսի տարածությունների քանակը պետք է սահմանափակված լինի նվազագույնով և հեշտությամբ մատչելի լինի մաքսային ստուգման համար:

Հոդված 3

Ծալովի և քանդովի բեռնարկեր

Ծալովի և քանդովի բեռնարկերը պետք է համապատասխանեն սույն Կանոնների 1-ին և 2-րդ հոդվածների դրույթներին: Բացի դրանից, դրանք պետք է ունենան հարմարանքներ, որոնք ֆիքսեն տարբեր մասերը բեռնարկը հավաքելուց հետո: Այս ֆիքսող հարմարանքները, եթե դրանք տեղադրված են հավաքված բեռնարկի արտաքին կողմում, պետք է լինեն այնպիսի կառուցվածքի, որպեսզի դրանց վրա հնարավոր լինի մաքսային կնիքներ և կապարակնիքներ դնել:

Հոդված 4

Բրեզենտե ծածկով բեռնարկեր

1. Սույն Կանոնների 1-ին, 2-րդ և 3-րդ հոդվածների դրույթները տարածվում են բրեզենտով ծածկված բեռնարկերի վրա այնքանով, որքանով այդ դրույթները կարող են դրանց հանդեպ կիրառվել: Բացի դրանից, այդ բեռնարկերը պետք է համապատասխանեն սույն հոդվածի դրույթներին:

2. Բրեզենտը պետք է պատրաստված լինի կա՛մ ամուր քաթանից, կա՛մ ոչ առաձգական, բավական ամուր, պլաստմասսայով կամ ռետինով ծածկված կտորից: Բրեզենտը պետք է լինի սարքին վիճակում և պատրաստված լինի այնպես, որ փակման հարմարանքի ամրացման դեպքում մուտքը դեպի բեռ անհնար դառնա՝ առանց տեսանելի հետքեր թողնելու:

3. Եթե բրեզենտը կազմված է մի քանի մասերից (կտորներից), ապա այդ մասերի եզրերը պետք է ծալված լինեն մեկը մյուսի մեջ և կարված լինեն երկու՝ առնվազն 15 մմ հեռավորությամբ կարերով: Այդ կարերը պետք է այնպես արված լինեն, ինչպես ցույց է տրված սույն Կանոնների կցված N1 նկարում: Սակայն, եթե բրեզենտի որոշ մասերում (օրինակ՝ հետևի բացովի փեշի և ամրացված անկյունների վրա) անհնար է միացնել կտորները նշված կերպով, ապա բավական է բրեզենտի վերևի մասի եզրը ծալել և կարել կտորները այնպես, ինչպես ցույց է տրված սույն Կանոններին կցված N2 նկարում: Կարերից մեկը պետք է երևա միայն ներսից, և այն թելի գույնը, որը օգտագործվում է այդ կարի համար, պետք է որոշակիորեն տարբերվի բրեզենտի գույնից, ինչպես նաև մյուս կարի համար օգտագործվող թելի գույնից: Բոլոր կարերը պետք է դրվեն մեքենայով:

4. Եթե բրեզենտը կազմված է մի քանի կտորից և ծածկված է պլաստմասսայով, ապա այդ կտորները նույնպես կարող են միացվել իրար զողման միջոցով՝ սույն Կանոններին կցված N3 նկարի համաձայն: Յուրաքանչյուր կտորի եզրը պետք է ծածկի մյուս կտորի եզրը առնվազն 15 մմ-ի չափով: Կտորների միացումը պետք է ապահովվի ամբողջ լայնությամբ: Միացման արտաքին եզրը պետք է ծածկված լինի առնվազն 7 մմ լայնությամբ պլաստմասսայե շերտով, որը դրվում է նույն զողման միջոցով: Այդ շերտի վրա, ինչպես նաև նրա յուրաքանչյուր կողմից, առնվազն 3 մմ լայնությամբ պետք է միանման հստակ ռեյիեֆ դրոշմվի: Ջողումը կատարվում է այնպես, որ կտորները անհնար լինի անջատել իրարից և նորից միացնել՝ առանց տեսանելի հետքեր թողնելու:

5. Նորոգումը կատարվում է սույն Կանոններին կցված N4 նկարում ցույց տրված ձևով: Կարվող եզրերը պետք է ծալված լինեն մեկը մյուսի մեջ և միացվեն երկու հստակ երևացող կարերով, որոնք իրարից հեռու լինեն առնվազն 15 մմ-ով. ներսից երևացող թելի գույնը պետք է տարբերվի դրսից երևացող թելի գույնից և հենց բրեզենտի գույնից. բոլոր կարերը պետք է մեքենայով արվեն: Այն դեպքերում, երբ եզրերից վնասված բրեզենտը նորոգվում է՝ փոխարինելով վնասված մասի կարկատանով, ապա կարը նույնպես կարող է կարվել սույն հոդվածի 3-րդ կետի դրույթների և սույն Կանոններին կցված N1 նկարի համաձայն: Պլաստմասսայով ծածկված կտորից բրեզենտի նորոգումը կարող է

կատարվել նաև սույն հոդվածի 4-րդ կետում նկարագրված մեթոդով, սակայն այդ դեպքում պլաստմասսայե շերտը պետք է դրվի բրեզենտի երկու կողմից, իսկ կարկատանը դրվի բրեզենտի ներքին կողմը:

6. Բրեզենտը պետք է ամրացվի բեռնարկղին՝ խստորեն հետևելով սույն Կանոնների 1-ին հոդվածի «ա» և «բ» ենթակետերում շարադրված պայմաններին: Նախատեսվում է ամրացման հետևյալ տեսակները՝

- ա) Բրեզենտը կարող է ամրացվել՝
- i) մետաղյա օղակներով, որոնք ամրացվում են բեռնարկղին,
- ii) բրեզենտի եզրերով բլթանցքերով և,
- iii) պարանոց կամ կառանով, որը անցնում է օղակների միջով ծածկի վրայով և տեսանելի է արտաքին կողմից ամբողջ երկարությամբ:

Բրեզենտը պետք է ծածկի բեռնարկղի կարծր մասը առնվազն 250 մմ լայնությամբ, որը չափվում է ամրացման օղակների կենտրոնից, եթե միայն բեռնարկղի կառուցվածքի համակարգը ինքնին չի խոչընդոտում մուտքը դեպի բեռը:

բ) Եթե անհրաժեշտ է ապահովել բրեզենտի մի եզրի մշտական ամրացումը բեռնարկղին, ապա երկու մակերեսները պետք է միացված լինեն առանց արանքների և պահվեն ամուր դետալների օգնությամբ:

գ) Երբ օգտագործվում է ծածկը փակող համակարգ, այն փակ վիճակում պետք է բրեզենտը միացնի բեռնարկղի արտաքին մասին (որպես օրինակ տես N6 նկարը):

7. Բրեզենտը պետք է ամրացվի համապատասխան վերնամասով (սյուններ, կողեր, կամարներ և այլն):

8 Օղակների միջև հեռավորությունը և բլթանցքների միջև հեռավորությունը չպետք է գերազանցի 200 մմ-ը: Տարածությունները կարող են, սակայն, լինել ավելի մեծ, բայց չպետք է գերազանցեն 300 մմ-ը օղակների և բլթանցքների միջև սյունի երկու կողմերից, եթե բեռնարկղի կառուցվածքը և բրեզենտը այնպիսին լինեն, որ կանխվի բեռնարկղ մուտք գործելը: Բլթանցքները պետք է ամրացվեն:

9. Պետք է կիրառվեն ամրացման հետևյալ տեսակները՝
- ա) պողպատե կառան՝ առնվազն 3 մմ տրամագծով, կամ
 - բ) կանեփաթելից կամ սիզալից պարան՝ առնվազն 8 մմ տրամագծով, որը պատված է թափանցիկ ոչ առաձգական պլաստիկ թաղանթով:

Կառանները կարող են նաև պատված լինել թափանցիկ ոչ առաձգական թաղանթով:

10. Յուրաքանչյուր կառան կամ պարան պետք է կազմված լինի մեկ կտորից և երկու ծայրերում ունենա մետաղյա ծայրակալներ: Յուրաքանչյուր մետաղյա ծայրակալի ամրացման հարմարանքը պետք է կազմված լինի դատարկ դուրգամից, որը

անցնի կառանի կամ պարանի միջով, և որի միջով անցնի մաքսային կապարակնիքների համար նախատեսված լարը: Կառանը կամ պարանը պետք է տեսանելի լինեն դատարկ դուրգամի երկու կողմերից էլ, որպեսզի հնարավոր լինի համոզվել, որ դրանք իսկապես կազմված են մեկ կտորից (տես նկար N5, որը կցված է սույն Կանոններին):

Այն դեպքերում, երբ բրեզենտը պետք է ամրացվի կառուցվածքային համակարգի հենասարքին, որը համապատասխանում է սույն հոդվածի 6-րդ կետի «ա» ենթակետին, գոտին կարող է օգտագործվել որպես ամրացման միջոց (կառուցվածքի այս համակարգի օրինակ է բերված սույն Կանոններին կից N7 նկարում):

11. Բրեզենտի այն մասերում, որտեղ բացվածքներ կան, որոնք օգտագործվում են բարձման և բեռնաթափման համար, բրեզենտի երկու փեշերը միացվում են իրար: Կարող են կիրառվել հետևյալ համակարգերը՝

ա) Բրեզենտի երկու եզրերը իրար հավասարաչափ ծածկում են: Դրանք նաև ամրացվում են՝

i) բացովի փեշի միջոցով, որը կարված կամ գոդված է սույն հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի դրույթների համաձայն,

ii) օղակների և բլթանցքերի միջոցով, որոնք համապատասխանում են սույն հոդվածի 8-րդ կետի պայմաններին,

iii) գոտու միջոցով, որը պատրաստված է ոչ առածգական համապատասխան նյութի ամբողջական կտորից, առնվազն 20 մմ լայնությամբ և 3 մմ հաստությամբ, որը անցնում է օղակների միջով և միացնում է բրեզենտի երկու եզրերը և բացովի փեշը. գոտին ամրացվում է բրեզենտի ներսի կողմից և պետք է ունենա կամ՝

- բլթանցք սույն հոդվածի 9-րդ կետում նշված կառանը կամ պարանը պահելու համար:

- բլթանցք, որը կարող է կցվել սույն հոդվածի 6-րդ կետում նշված մետաղյա օղակին և ամրացվել սույն հոդվածի 9-րդ կետում նշված կառանով:

Բացովի փեշ չի պահանջվում, եթե առկա է հատուկ հարմարանք (օրինակ՝ պաշտպանիչ միջնորմ), որը խոչընդոտում է մուտքը դեպի բեռը՝ առանց տեսանելի հետքեր թողնելու:

բ) Բրեզենտի եզրերը փակ պահող հատուկ փակող համակարգ, երբ բեռնարկը փակված և կնքված է: Համակարգը կունենա բացվածք, որի միջով մետաղյա օղակը, որի մասին հիշատակված է սույն հոդվածի 6-րդ կետում, կարող է անցնել և ամրացվել կառանով, որի մասին հիշատակված է սույն հոդվածի 9-րդ կետում (տես N8 նկարը, որը կցված է սույն Կանոններին):

12. Տարբերակիչ նշանները, որոնք պետք է տեղադրվեն բեռնարկի վրա 1-ին հավելվածի համաձայն, և թույլտվության ցուցանակը, որը նախատեսված է 5-րդ հավելվածում, ոչ մի դեպքում չպետք է ծածկված լինեն բրեզենտով:

Հողված 5

Անցումային դրույթներ


Մինչև 1977թ. հունվարի 1-ը կթույլատրվի այնպիսի ծայրակալների կիրառումը, որոնք բերված են սույն Կանոններին կցված N5 նկարում, նույնիսկ եթե դրանք ունենան այնպիսի գամեր, որոնք նախկինում ընդունված են եղել այն չափսի անցքերով, որոնք նկարում բերվածից փոքր են:

ՀԱՎԵԼՎԱԾ 4 –

Նկար N1


ՄԻ ԲԱՆԻ ԿՏՈՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԲՐԵՉԵՆՏ

որոնք իրար միացված են կարով



Նկար N2

ՄԻ ՔԱՆԻ ԿՏՈՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԲՐԵՉԵՆՏ




ՀԱՎԵԼՎԱԾ 4

Նկար N3


ՄԻ ԶԱՆԻ ԿՏՈՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԲՐԵՉԵՆՏ

որոնք գողված են իրար



ՀԱՎԵԼՎԱԾ 4 -

Նկար N4
ԲՐԵԶԵՆՏԻ ՆՈՐՈԳՈՒՄԸ




*Ներսի կարերի գույնը պետք է տարբերվի դրսի կարերի գույնից և բրեզենտի գույնից


Նկար N5
ԾԱՅՐԱԿԱԼԻ ՆՄՈՒՇԸ

1. Կողքից. առջևի մասը

Դատարկ դուրգամը՝ մաքսային կապարակնիքի լարի անցկացման համար (անցքի նվազագույն չափսերը՝ լայնությունը՝ 3 մմ, երկարությունը՝ 11 մմ)




2. Տեսքը կողքից. հետևի մասը



ՀԱՎԵԼՎԱԾ 4

– Նկար N6


ԲԻԵԶԵՆՏԻ ԱՄՐԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆՄՈՒՇԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 4 –

Նկար N7


ԲՐԵՉԵՆՏԻ՝ ՀԱՏՈՒԿ ՁԵՎԻ ՀԵՆԱՍԱՀՔԻՆ ԱՄՐԱՑՄԱՆ ՕՐԻՆԱԿԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 4 –

Նկար N8

ԲԵՌՆՄԱՆ ԵՎ ԲԵՌՆԱԹԱՓՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԲԱՅՎԱԾՔՆԵՐԻ ՓԱԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ



Նկարագրություն

Տվյալ փակման համակարգում բրեզենտի երկու եզրերը, որոնք օգտագործվում են բեռնման և բեռնաթափման համար, միացված են ալյումինե փակող ձողի միջոցով: Բրեզենտի բացվածքները ունեն կարվածք, որի միջով ամբողջ երկարությամբ կարված է պարանը (տես նկար N 8.1): Դա թույլ չի տալիս հանել բրեզենտը փակող ձողի ակոսից: Կարվածքը պետք է գտնվի արտաքին մասում և միացված լինի զողման միջոցով՝ համաձայն Կոնվենցիային կից 2-րդ հավելվածի 3-րդ հոդվածի 4-րդ կետի:

Բրեզենտի եզրերը պետք է անցնեն ալյումինե փակող ձողի բաց ակոսների միջով երկու ուղղահայաց երկակի կանալներով, որոնք պետք է փակ լինեն իրենց ստորին մասում: Երբ փակող ձողը գտնվում է վերին դիրքում, բրեզենտի եզրերը միացված են:

Բացվածքի վերին ծայրում փակող ձողը ֆիքսվում է բրեզենտի վրա դուրգամների միջոցով (տես նկար N 8.2): Փակող ձողը կազմված է երկու մասից, որոնք միացված են դուրգամած հանգույցի միջոցով, որը հնարավորություն է տալիս ծալել այն դնելիս և հանելիս: Այդ հանգույցը պետք է այնպես պատրաստված լինի, որ համակարգը փակելուց հետո հնարավոր չլինի հանել շրջուն սոնացիցը (տես նկար N 8.3):

Փակող ձողի ստորին մասում անցք կա, որի միջով անցնում է օղակը: Այդ անցքը օվալաձև է բավարար յայնություն ունի, որպեսզի նրա միջով անցնի օղակը (տես նկար N 8.4): Փակող ձողի ամրացման համար այդ օղակի միջով անցնում է ամրացման պարանը:

ՀԱՎԵԼՎԱԾ 5

4-րդ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՆԱԽՏԵՍՎԱԾ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԻՆ ՀԱՍՏՊԱՏԱՍԽԱՆՈՂ ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ ԹՈՒՅԼԱՏՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Ընդհանուր դրույթներ

1. Բեռնարկղերը կարող են թույլատրվել մաքսային կնիքներով և կապարակնիքներով բեռնափոխադրումներ իրականացնելու համար՝

ա) կա՛ն արտադրման փուլում՝ ըստ կառուցվածքի տեսակի (արտադրման փուլում թույլտվության ընթացակարգ),

բ) կա՛ն հաջորդող որևէ փուլում՝ անհատական կարգով կամ միևնույն տեսակի բեռնարկղերի որոշակի խմբաքանակներով (արտադրությունից հետո որևէ փուլում թույլատրման ընթացակարգ):

Թույլատրման երկու ընթացակարգերի ընդհանուր դրույթներ

2. Իրավասու մարմինը, որը իրականացնում է թույլատրման ընթացակարգը, թույլատրումից հետո հայց ներկայացրած ձեռնարկությանը տալիս է թույլտվության վկայական, որը, հանգամանքներից կախված, ուժի մեջ է կա՛ն թույլատրված տեսակի բեռնարկղերի անսահմանափակ քանակի համար, կա՛ն բեռնարկղերի որոշակի քանակի համար:

3. Նախքան մաքսային կնիքներով և կապարակնիքներով բեռնափոխադրում կատարելը, թույլտվության վկայականի տերը պետք է թույլտվության ցուցանակը փակցնի թույլատրված բեռնարկղ(եր)ի վրա:

4. Թույլտվության ցուցանակը պետք է ամուր փակցվի լավ տեսանելի տեղում՝ ցանկացած այլ ցուցանակի կողքին, որը տրված է պաշտոնական նպատակների համար:

5. Սույն հավելվածի 1-ին հավելումում բերված N1 օրինակին համապատասխանող թույլտվության ցուցանակը իրենից ներկայացնում է մետաղյա թիթեղ՝ 20սմx10 սմ չափսերով: Նրա մակերեսի վրա պետք է հատիչով փորագրվի, դրոշմվի ռելիեֆով կամ ցանկացած այլ ձևով հստակ և ամուր ձևով նշվի առնվազն ֆրանսերեն կամ անգլերեն ստորև բերված գրառումները.

ա) «APPROVED FOR TRANSPORT UNDER CUSTOMS SEAL» (թույլատրված է մաքսային կնիքներով և կապարակնիքներով փոխադրման համար),

բ) երկրի անվանումը, որտեղ բեռնարկղը թույլատրվել է, կամ անվանումով կամ ISO ալֆա-2 երկրի կոդով, համաձայն միջազգային ISO 3166 ստանդարտի, կամ

տարբերակիչ նշանի տեսքով, որը օգտագործվում է միջազգային փոխադրումների ժամանակ ավտոտրանսպորտային միջոցի գրանցման երկիրը նշելու համար, և թույլտվության վկայականի համարը (թվեր, տառեր և այլն), ինչպես նաև թույլատրման տարին (օրինակ՝ «NL/26/73» նշանակում է՝ «Նիդեռլանդներ, թույլտվության վկայական N 26, տրված 1973թ.»),

գ) բեռնարկղի հերթական համարը, որը տրվել է արտադրող գործարանի կողմից (գործարանային համարը),

դ) եթե բեռնարկղը թույլատրված է ըստ կառուցվածքի տեսակի, ցուցանակի վրա պետք է նշվեն նաև տվյալ տեսակի բեռնարկղի տարբերակիչ թվերը կամ տառերը:

6. Եթե բեռնարկղը այլևս չի բավարարում թույլատրման ընթացակարգով նախանշված տեխնիկական պահանջները, ապա նախքան մաքսային կնիքներով և կապարակնիքներով փոխադրումների համար օգտագործելը, պետք է վերականգնվի դրա նախկին վիճակը, որը հիմք է հանդիսացել դրա թույլատրման համար, այնպես, որ նորից համապատասխանի այդ տեխնիկական պահանջներին:

7. Եթե բեռնարկղի հիմնական բնութագրերը փոփոխված են, ապա այդ բեռնարկղի թույլտվությունը կորցնում է իր ուժը, և այն պետք է նոր թույլատրման ընթացակարգ անցնի իրավասու մարմնի կողմից, նախքան մաքսային կնիքներով և կապարակնիքներով բեռնափոխադրումների համար օգտագործվելը:

Հատուկ դրույթներ, որոնք վերաբերում են արտադրման փուլում
ըստ կառուցվածքի տեսակի թույլտվությանը

8. Երբ միևնույն տեսակի բեռնարկղերը սերիականորեն են արտադրվում, ապա արտադրող գործարանը կարող է դիմել այն երկրի իրավասու մարմնին, որտեղ նրանք արտադրվում են, խնդրելով դրանց թույլտվությունը իրականացնել ըստ կառուցվածքի տեսակի:

9. Արտադրող գործարանը պետք է իր դիմումի մեջ նշի տարբերակիչ այն թվերը և տառերը, որոնք տալիս է իր դիմումի առարկա հանդիսացող բեռնարկղերի տեսակին:

10. Այդ դիմումին պետք է կցվեն թույլատրման ենթակա բեռնարկղի կառուցվածքի տեսակի գծագրերը և մանրամասն նկարագրությունը:

11. Արտադրող գործարանը պետք է գրավոր պարտավորվի, որ՝

ա) իրավասու մարմնին կներկայացնի տվյալ տեսակի այն բեռնարկղերը, որոնք այդ մարմինը կցանկանա ստուգել,

բ) իրավասու մարմնին թույլ կտա տվյալ տեսակի բեռնարկղի սերիական արտադրության ցանկացած պահին ստուգել այլ միավորները,

գ) իրավասու մարմնին կտեղեկացնի գծագրերի և կառուցվածքի նկարագրության ցանկացած փոփոխության մասին, անկախ դրանց կարևորությունից, նախքան այդ փոփոխությունների կատարումը,

դ) տեսանելի տեղերում բեռնարկղերի վրա կնշի, բացի թույլատրման ցուցանակի համար նախատեսված նշաններից, կառուցվածքի տեսակի տարբերակիչ թվերը և տառերը, ինչպես նաև յուրաքանչյուր սերիական արտադրության տվյալ տեսակի բեռնարկղի հերթական համարը (գործարանային համարը),

ե) կկատարի բեռնարկղերի հաշվառումը, որոնք կառուցված են թույլատրված տեսակին համապատասխան:

12. Իրավասու մարմինը անհրաժեշտության դեպքում նշում է այն փոփոխությունները, որոնք պետք է կատարել նախատեսված կառուցվածքի տեսակի մեջ՝ փոխադրման թույլտվության համար:

13. Ոչ մի բեռնարկղ չի կարող թույլատրվել ըստ կառուցվածքի տեսակի ընթացակարգի համաձայն, եթե իրավասու մարմինը եզրակացության չի հանգել ըստ մեկ կամ մի քանի այդ տեսակի կառուցված բեռնարկղերի ստուգման հիման վրա, որ այդ տեսակի բեռնարկղերը բավարարում են 4-րդ հավելվածում նախատեսված տեխնիկական պահանջները:

14. Որևէ տեսակի բեռնարկղի թույլտվությունից հետո դիմում ներկայացրած ձեռնարկությանը տրվում է թույլտվության վկայական մեկ օրինակից, որը համապատասխանում է սույն հավելվածի 2-րդ հավելման N2 օրինակին, և որը վավերական է բոլոր այն բեռնարկղերի համար, որոնք կկառուցվեն թույլատրված տեսակի հատկորոշումների համաձայն: Այդ վկայականը իրավունք է տալիս արտադրող գործարանին տվյալ տեսակի յուրաքանչյուր սերիական բեռնարկղի վրա ամրացնել թույլտվության ցուցանակը՝ սույն հավելվածի 5-րդ կետի համաձայն:

Հատուկ դրույթներ, որոնք վերաբերում են արտադրությունից հետո


որևէ փուլում թույլտվությանը

15. Եթե արտադրության փուլում բեռնարկղերի թույլտվության դիմում չի ներկայացվել, ապա տերը, բեռնարկղերի շահագործման ձեռնարկությունը կամ նրանց ներկայացուցիչները կարող են խնդրանքով դիմել իրավասու մարմնին, որին նրանք կարող են ներկայացնել այն բեռնարկղ(եր)ը, որոնց թույլտվությունը հայցվում է:

16. Թույլտվության յուրաքանչյուր դիմում, որը ներկայացվել է սույն հավելվածի 15-րդ կետի համաձայն, պետք է պարունակի հերթական համարը (գործարանային համարը), որը նշում է արտադրող գործարանը յուրաքանչյուր բեռնարկղի վրա:

17. Երբ իրավասու մարմինը որոշակի թվով բեռնարկերի ստուգումից հետո, որքան որ նա անհրաժեշտ է համարում, համոզվում է, որ այդ բեռնարկ(եր)ը համապատասխանում են 4-րդ հավելվածում նախատեսված տեխնիկական պահանջներին, նա տրամադրում է թույլտվության վկայականը՝ ըստ սույն հավելվածի 3-րդ հավելումի N3 օրինակի, որը ուժի մեջ է միայն այնքան բեռնարկերի համար, որքան թույլատրվել են: Այդ վկայականը, որի մեջ նշված են արտադրող գործարանի կողմից բեռնարկ(եր)ին տրված հերթական համար(ներ)ը, որոնց այն վերաբերվում է, իրավունք է տալիս դիմում ներկայացրած ձեռնարկությանը յուրաքանչյուր թույլատրված բեռնարկի վրա ամրացնել թույլտվության ցուցանակ, ինչպես նախատեսված է սույն հավելվածի 5-րդ կետում:

5-րդ ՀԱՎԵԼՎԱԾԻ 1-ին ՀԱՎԵԼՈՒՄ
Նմուշ N1 – Թույլտվության ցուցանակ
(Անգլերեն տարբերակը)



*Միայն ըստ կառուցվածքի տեսակի թույլտվության դեպքում

5-րդ ՀԱՎԵԼՎԱԾԻ 2-րդ ՀԱՎԵԼՈՒՄ

Նմուշ N 2 – Բեռնարկղերի մասին մաքսային կոնվենցիա (1972թ.)

Թույլտվության վկայական՝ ըստ կառուցվածքի տեսակի

- 1. Վկայական N *
Certificate No
- 2. Սույնով հաստատվում է, որ ներքոնշյալ բեռնարկղի կառուցվածքի տեսակը թույլատրված է, և այս տեսակի արտադրված բեռնարկղերը կարող են ընդունվել մաքսային կնիքներով և կապարակնիքներով բեռնափոխադրումներ կատարելու համար
This is to certify that the container design type described below has been approved and that containers manufactured to this type can be accepted for the transport of goods under Customs seal.
- 3. Բեռնարկղի տեսակը
Kind of container
- 4. Կառուցվածքի տեսակի տարբերակիչ համարը կամ տառերը
Identification number or letters of the design type
- 5. Գծագրերի տարբերակիչ համարը
Identification number of the working drawings
- 6. Նկարագրված կառուցվածքի տարբերակիչ համարը
Identification number of the design specifications
- 7. Տարայի քաշը
Tare weight
- 8. Արտաքին չափսերը սմ-ով
External dimensions in centimetres
- 9. Կառուցվածքի հիմնական բնութագրերը (նյութերի տեսակը, կառուցվածքի տեսակը և այլն)
Essential characteristics of structure (nature of material, kind of construction, etc.)
Սույն վկայականը ուժի մեջ է վերոնշյալ գծագրերի և բնութագրերի համաձայն արտադրված բոլոր բեռնարկղերի համար
This certificate is valid for all containers manufactured in conformity with the drawings and specifications referred to above
- 10. Տրված է _____
(արտադրող գործարանի անվանումը և հասցեն)

որին թույլատրված է ամրացնել թույլտվության ցուցանակը յուրաքանչյուր կառուցվածքի տեսակով ընդունված բեռնարկղի վրա, որը արտադրվել է իր կողմից

_____ **ամսաթիվը** _____
(վայրը)

Issued to _____
(Manufacturer's name and address)

who is authorised to affix an approval plate to each container of the approved design type manufactured by him

at _____ *on*

_____ (Թույլտվությունը տրամադրված ձեռնարկության կամ կազմակերպության ստորագրությունը)

by _____
(signature and stamp of issuing service or organization)

* Գրել տառերը և թվերը, որոնք նշվելու են թույլտվության ցուցանակի վրա (տես Բեռնարկղերի վերաբերյալ մաքսային կոնվենցիայի (1972թ.) 5-րդ հավելվածի 5բ) կետը

ԿԱՐԵՎՈՐ ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

(Բեռնարկղերի վերաբերյալ մաքսային կոնվենցիայի (1972թ.) 5-րդ հավելվածի 6-րդ և 7-րդ կետերը

6. Եթե կոնտեյները այլևս չի բավարարում թույլատրման ընթացակարգով նախանշված տեխնիկական պահանջները, ապա նախքան մաքսային կնիքներով և կապարակնիքներով փոխադրումների համար օգտագործելը, պետք է վերականգնվի դրա նախկին վիճակը, որը հիմք է հանդիսացել նրա թույլատրման համար, այնպես, որ նորից համապատասխանի տեխնիկական պահանջներին:

7. Եթե կոնտեյների հիմնական բնութագրերը փոփոխված են, ապա այդ կոնտեյների թույլտվությունը կորցնում է իր ուժը, և այն պետք է նոր թույլատրման ընթացակարգ անցնի իրավասու մարմնի կողմից, նախքան մաքսային կնիքներով և կապարակնիքներով բեռնափոխադրումների համար օգտագործվելը:

5-րդ ՀԱՎԵԼՎԱԾԻ 3-րդ ՀԱՎԵԼՈՒՄ

Նմուշ N 3 – Բեռնարկղերի վերաբերյալ մաքսային կոնվենցիա (1972թ.)

Թույլտվության վկայական, որը տրվել է արտադրությունից հետո որևէ փուլում

1.	Վկայական N* <i>Certificate No</i>
2.	Մույնով հաստատվում է, որ ներքոնշյալ բեռնարկղ(եր)ը թույլատրված է (են) մաքսային կնիքներով և կապարակնիքներով բեռնափոխադրումներ կատարելու համար <i>This is to certify that the container specified below has been approved for the transport of goods under Customs seal.</i>
3.	Բեռնարկղի տեսակը <i>Kind of container</i>
4.	Արտադրող գործարանի կողմից բեռնարկղին տրված հերթական համարը <i>Serial number assigned to the container by the manufacturer</i>
5.	Տարայի քաշը <i>Tare weight</i>
6.	Արտաքին չափսերը սմ-ով <i>External dimensions in cm.</i>
7.	Կառուցվածքի հիմնական բնութագրերը (նյութերի տեսակը, կառուցվածքի տեսակը և այլն) <i>Essential characteristics of structure (nature of material, kind of construction, etc.)</i>
8.	<p>Տրված է _____ <small>(արտադրող գործարանի անվանումը և հասցեն)</small></p> <p>որին թույլատրված է ամրացնել թույլտվության ցուցանակը վերոնշյալ բեռնարկղ(եր)ի վրա</p> <p>_____ ամսաթիվը _____ <small>(վայրը)</small></p> <p>Issued to _____ <small>(Manufacturer's name and address)</small></p> <p>who is authorised to affix an approval plate to the above-mentioned container(s) at _____ on _____</p> <p>_____ <small>(Թույլտվությունը տրամադրած ձեռնարկության կամ կազմակերպության ստորագրությունը)</small></p> <p>by _____ <small>(signature and stamp of issuing service or organization)</small></p>

* Գրել տառերը և թվերը, որոնք դրվելու են թույլտվության ցուցանակի վրա (տես՝ Բեռնարկղերի վերաբերյալ մաքսային կոնվենցիայի (1972թ.) 5-րդ հավելվածի 5բ) կետը

ԿԱՐԵՎՈՐ ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

(Բեռնարկղերի մասին մաքսային կոնվենցիայի (1972թ.) 5-րդ հավելվածի 6-րդ և 7-րդ կետերը

6. Եթե կոնտեյները այլևս չի բավարարում թույլատրման ընթացակարգով նախանշված տեխնիկական պահանջները, ապա նախքան մաքսային կնիքներով և կապարակնիքներով փոխադրումների համար օգտագործելը, պետք է վերականգնվի դրա նախկին վիճակը, որը հիմք է հանդիսացել նրա թույլատրման համար, այնպես, որ նորից համապատասխանի տեխնիկական պահանջներին:

7. Եթե կոնտեյների հիմնական բնութագրերը փոփոխված են, ապա այդ կոնտեյների թույլտվությունը կորցնում է իր ուժը, և այն պետք է նոր թույլատրման ընթացակարգ անցնի իրավասու մարմնի կողմից, նախքան մաքսային կնիքներով և կապարակնիքներով բեռնափոխադրումների համար օգտագործվելը:

ՀԱՎԵԼՎԱԾ 6
ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ
Ներածություն

i) Համաձայն ս^օ ույն Կոնվենցիայի 13-րդ հոդվածի դրույթների, բացատրական գրառումները մեկնաբանում են սույն Կոնվենցիայի և դրա հավելվածների որոշ դրույթներ:

ii) Բացատրական գրառումները չեն փոխում սույն Կոնվենցիայի և դրա հավելվածների դրույթները, այլ ավելի ճշգրիտ են դարձնում դրանց բովանդակությունը և կիրառման շրջանակները:

iii) Մաս^օ նավորապես, հաշվի առնելով սույն Կոնվենցիայի 12-րդ հոդվածի և դրա 4-րդ հավելվածի դրույթներում շարադրված սկզբունքները մաքսային կնիքներով և կապարակնիքներով փոխադրումներ կատարող բեռնարկղերի թույլտվության մասին, բացատրական գրառումները, որտեղ դա կիրառելի է, հատկորոշում են կառուցման տեխնիկան, որը Պայմանավորվող կողմերը պետք է ընդունեն որպես այդ դրույթներին համապատասխանող: Բացատրական գրառումներում կարող է նաև նշվել, թե կառուցվածքային ինչ յուրահատկություններ չեն համապատասխանում այդ դրույթներին:

iv) Բացատրական գրառումները սույն Կոնվենցիան և դրա հավելվածները կիրառելու համար միջոցներ են ապահովում՝ տեխնիկական զարգացման մակարդակի և տնտեսական պահանջների համաձայն:

0. Կոնվենցիայի հիմնական տեքստը

0.1. Հոդված 1, գ) i. ենթակետ – Մասամբ փակ բեռնարկղեր

0.1. գ) i.-1. «Մասամբ փակ» տերմինը, որը վերաբերում է 1-ին ենթակետում նշված սարքավորմանը, վերաբերում է այն սարքավորմանը, որը հիմնականում բաղկացած է հատակից և վերևի կառուցվածքից, որը առանձնացնում է բարձման տարածությունը, որը համարժեք է փակ բեռնարկղի տարածությանը: Վերևի կառուցվածքը սովորաբար պատրաստվում է մետաղյա մասերից, որը ձևավորում է բեռնարկղի կմախքը: Այս տեսակի բեռնարկղերը կարող են նաև բաղկացած լինել մեկ կամ ավելի կողային կամ դիմային պատերից: Որոշ դեպքերում առկա է միայն տանիքը, որը հատակին ամրանում է հենակներով: Այս տեսակի բեռնարկղը օգտագործվում է մասնավորապես մեծածավալ բեռների փոխադրման համար (օրինակ՝ մարդատար ավտոմեքենաների):

Ենթակետ գ) - Բեռնարկղի հարմարանքները և սարքավորումները

0.1.գ) - 1. «Բեռնարկղի հարմարանքներ և սարքավորումներ» տերմինը ընդգրկում է մասնավորապես հետևյալ միջոցները, նույնիսկ եթե դրանք շարժական են.

ա) բեռնարկղի ներսում ջերմաստիճանի վերահսկման, փոփոխման կամ պահպանման համար նախատեսված սարքավորում,

բ) փոքր սարքավորումներ, ինչպիսիք են ջերմաստիճանի կամ արտաքին հարվածների գրանցման սարքերը, որոնք նախատեսված են շրջապատի պայմանների փոփոխության կամ արտաքին հարվածների նշման կամ գրանցման համար,

գ) ներքին միջնապատեր, տակդիրներ, դարակներ, հենակներ, կեռեր և մնանատիպ հարմարանքներ, որոնք օգտագործվում են բեռների տեղավորման և ամրացման համար:

0.1.գ) - 2 «ապամոնտաժվող բեռնախուց» տերմինը նշանակում է բեռնախուց, որը ինքնաշարժման միջոց չունի և պատրաստված է մասնավորապես ավտոտրանսպորտային միջոցի վրա փոխադրվելու համար, որի շասսին բեռնախցի հենասարքի հետ միասին հատուկ հարմարեցված է այս նպատակի համար: Այն ներառում է նաև հատուկ տեսակի բեռնարկղերը, որոնք հատուկ նախատեսված են համակցված ավտոտրանսպորտային և երկաթուղային փոխադրման համար:

1. Հավելված 1

1.1. Կետ 1 – Պլաստիկ ժապավենի կիրառումը տարբերակիչ նշանների և բեռնարկղերի համարների համար

1.1-1 Բեռնարկղերի տարբերակիչ նշանների և համարների համար պլաստիկ ժապավենի կիրառման դեպքում պահանջվում են հետևյալ պայմանները.

ա) պետք է կիրառվի բարձր որակի սուսինձ: Ժապավենը կպցնելուց հետո պետք է բավականին ամուր լինի, որպեսզի նրա վնասումը, առանց հետքեր թողնելու, անհնար լինի: Չուլման մեթոդով պատրաստված ժապավենը բավարարում է այս պահանջները: Օրացուցային մեթոդով պատրաստված ժապավենը չի կիրառվում,

բ) եթե տարբերակիչ նշանները և համարները պետք է փոփոխվեն, փոխարինվող ժապավենը պետք է նախքան նոր ժապավեն ամրացնելը ամբողջությամբ հանվի. գոյություն ունեցող ժապավենի վրա նորի ամրացումը չի թույլատրվում:

1.1-2 Բեռնարկղերի նշագրման համար պլաստիկ ժապավենի կիրառման պայմանները, որոնք նշված են սույն բացատրական գրառման 1.1-1 ենթակետում, չեն բացառում նշագրման այլ վստահելի մեթոդները:

4. Հավելված 4

4.2. Հոդված 2, ենթակետ 1ա) - Բեռնարկղերի բաղկացուցիչ մասերի հավաքումը

4.2.1.ա)-1 ա) Ամրացնող հարմարանքների (գամեր, պտուտակներ, գնդերիթներ և պնդողակներ) օգտագործման դեպքում պետք է դրսից այդ հարմարանքների բավարար քանակություն մտցվի, որոնք հատեն հավաքված բաղկացուցիչ մասերը, ելնեն դեպի ներս և այնտեղ ամուր ամրացվեն (օր. գամվեն, գողվեն, սոնակավեն, գնդերիթվեն և գամվեն կամ գողվեն պնդողակների վրա): Սակայն տիպային գամերը (այսինքն՝ այն գամերը, որոնց տեղադրումը պահանջում է բաղկացուցիչ մասերի երկու կողմից ամրացում) կարող են մտցվել նաև ներսից: Չնայած վերոնշյալին, բեռնարկղի հատակները կարող են ամրացվել ինքնահորակող պտուտակների կամ ինքնաձակող գամերի միջոցով կամ պայթուցիկ լիցքով մտցվող դուրգամների միջոցով, եթե դրվում են ներսից և անցնում են ուղիղ անկյան տակ՝ հատակի և մետաղյա լայնակահեծանների միջով, բացառությամբ ինքնահորակող պտուտակների, պայմանով, որ դրանց որոշ ծայրեր հավասարեցվեն լայնակահեծանների դրսի մասի մակարդակին կամ գողվեն դրա վրա:

բ) Իրավասու մարմինը կորոշի, թե ինչ միացնող հարմարանքներ և ինչ քանակությամբ պետք է բավարարեն սույն գրառումների ա) ենթակետի պահանջները. նրանք դա կանեն համոզվելով, որ այդ ձևով հավաքված բաղկացուցիչ մասերը չեն կարող ապամոնտաժվել առանց տեսանելի հետքեր թողնելու: Այլ միացնող հարմարանքների ընտրությունը և տեղադրումը ենթակա չէ որևէ սահմանափակման:

գ) Ամրացնող հարմարանքները, որոնք կարող են հանվել և փոխարինվել մեկ կողմից՝ առանց տեսանելի հետքեր թողնելու, այսինքն՝ որոնք չեն պահանջում հավաքվող բաղկացուցիչ մասերի տեղադրում երկու կողմից, թույլ չեն տրվի սույն գրառումների ա) ենթակետի ներքո: Այդպիսի հարմարանքների օրինակներն են ընդլայնվող դուրգամները, խուլ գամերը և այլն: Սակայն խուլ գամերը կարող են օգտագործվել այն պայմանով, որ սույն Կոնվենցիային կից 6-րդ հավելվածի 4.2.1. ա)-1-ի 1-ին կետի բացատրական գրառումում նկարագրված բավարար քանակով այլ ամրացնող հարմարանքներ օգտագործվեն բաղկացուցիչ մասերը հավաքելու համար:

դ) Վերոնշյալ հավաքման մեթոդները պետք է կիրառվեն հատուկ բեռնարկղերի համար, օրինակ՝ իզոթերմիկ բեռնարկղերի, սառնարան բեռնարկղերի և ցիստեռնային բեռնարկղերի, եթե դրանք չեն համապատասխանում այն տեխնիկական պահանջներին, որոնք պետք է բավարարեն այդպիսի բեռնարկղերը՝ հաշվի առնելով դրանց օգտագործման նպատակը: Երբ տեխնիկական պատճառներով հնարավոր չէ ամրացնել մասերը սույն գրառումների ա) ենթակետում նշված կերպով, ապա բաղկացուցիչ մասերը

կարող են միացվել սույն գրառումների գ) ենթակետում նշված կերպով, պայմանով, որ պատի ներքին երեսի վրա օգտագործվող ամրացնող հարմարանքը դրսից հասանելի չ:

1բ) ենթակետ - Դռները և փակող այլ համակարգերը

4.2.1.բ)-1. ա) Հարմարանքը, որի վրա պետք է դրվի մաքսային կնիքը և կապարակնիքները, պետք է՝

i) ամրացվի գոդման միջոցով, կա առնվազն երկու միացնող հարմարանքներով, որոնք համապատասխանում են 4.2.1.ա) բացատրական գրառումների ա) ենթակետին, կամ

ii) լինի այնպես պատրաստված, որ երբ բեռնարկը փակված վիճակում է և կնքված է, հարմարանքը հնարավոր չլինի հանել առանց տեսանելի հետքեր թողնելու, կամ,

Այն պետք է նաև՝

iii) ներառի ոչ պակաս քան 11մմ տրամագծով անցքեր կամ առնվազն 11մմ երկարություն և 3մմ լայնություն ունեցող ճեղքեր:

iv) հավասարազոր անվտանգություն թույլ տա, ինչ տեսակի կապարակնիք որ օգտագործվի:

բ) Ծխնիներ, կախովի փականներ, հողակապեր և դռների կախման համար նախատեսված նմանատիպ այլ հարմարանքներ պետք է ամրացվեն՝ սույն գրառումների ա) ենթակետի պահանջների համաձայն: Բացի դրանից, այդպիսի հարմարանքների տարբեր բաղկացուցիչներ (օր.՝ դռան ծխնու թևերը, գնդերիթները և հողակապավոր միացությունները), պայմանով, որ դրանք անհրաժեշտ են բեռնարկի մաքսային անվտանգությունը ապահովելու համար (տես՝ նկար N7՝ կցված սույն Հավելվածին) պետք է այնպես ամրացվեն, որ դրանք, առանց տեսանելի հետքեր թողնելու, հնարավոր չլինի հանել կամ ապամոնտաժել, եթե բեռնարկը փակ է և կնքված: Սակայն, երբ այդպիսի հարմարանքները հասանելի չեն դրսից, ապա բավական է, եթե դռան կամ փակման հարմարանքի փակելուց և կնքելուց հետո անհնարին լինի այն ապամոնտաժել՝ առանց տեսանելի հետքեր թողնելու: Եթե դուռը կամ փակման հարմարանքը ավելի շատ ծխնիներ ունի, ապա միայն դռան ամենածայրին գտնվող երկու ծխնիները պետք է ամրացվեն համապատասխան վերոնշյալ ա) i) և ii) ենթակետերին:

գ) Բացառիկ՝ իզոթերմիկ բեռնարկղերի դեպքում մաքսային կապարակնքման հարմարանքը, ծխնիները և այլ միջոցներ, որոնց հեռացման դեպքում մուտք կբացվի դեպի բեռնարկղի ներսը կամ դեպի այն տարածքը, որտեղ կարող է թաքցված լինել բեռը, կարող են ֆիքսվել այդպիսի բեռնարկղերի դռների վրա հետևյալ համակարգերի միջոցով՝

i) գնդերիթների կամ պտուտակների միջոցով, որոնք դրվում են դրսից, սակայն չեն համապատասխանում վերոնշյալ 4.2.1. ա)-1 բացատրական գրառումների ա) ենթակետի պահանջներին, պայմանով, որ

գնդերիթների կամ պտուտակների պոչերը ֆիքսվեն դռան կառուցվածքի դրսի կողմի մետաղյա հարմարանքի վրա, և

համապատասխան քանակի գնդերիթների կամ պտուտակների գլխիկները այնպես զողվեն մաքսային կապարակնքվող հարմարանքին, ծխնիներին և այլն, որ դրանք ամբողջովին դեֆորմացված լինեն, և գնդերիթներն ու պտուտակները հանելու հնարավորություն չլինի՝ առանց տեսանելի հետքեր թողնելու (տես նկար N4, որը կցված է սույն հավելվածին),

ii) իզոթերմիկ դռան կառուցվածքի ներսից մտցված ամրացնող հարմարանքի միջոցով, պայմանով, որ՝

ամրացնող դուրգամր և պահող **խամուրը** հավաքված լինեն պնևմատիկ կամ հիդրավլիկ սարքավորման միջոցով և ֆիքսվեն դռան կառուցվածքի արտաքին շերտի և մուկուսացված հատվածի միջև եղած մետաղյա թիթեղի վրա,

ամրացնող դուրգամրի գլխիկը մատչելի չպետք է լինի բեռնարկղի ներսից, և

բավականաչափ պահող **խամուրներ** և ամրացնող դուրգամրեր զողվեն իրար և հարմարանքները հնարավոր չլինի հանել՝ առանց տեսանելի նշաններ թողնելու (տես նկար N8, որը կցված է սույն հավելվածին):

«Իզոթերմիկ բեռնարկղ» տերմինը վերաբերում է սառնարան և իզոթերմիկ բեռնարկղերին:

դ) Բեռնարկղերը, որոնք մեծ թվով այնպիսի փակման միջոցներ ունեն, ինչպիսիք են փականները, փակիչ կռունկները, **մտոցների** կափարիչները, կցեզրերը և այլն, պետք է ունենան այնպիսի կառուցվածք, որ մաքսային կապարակնիքների քանակը հնարավորինս սահմանափակ լինի: Այդ նպատակով հարևան փականները պետք է իրար միացվեն ընդհանուր հարմարանքով, որը պահանջում է միայն մեկ մաքսային կնիք կամ կապարակնիք, կամ պետք է ունենան ծածկ, որը բավարարում է նույն պահանջը:

ե) Բացովի տանիքներով բեռնարկղերը պետք է կառուցված լինեն այնպես, որ հնարավոր լինի նվազագույն թվով մաքսային կապարակնիքներ և կնիքներ դնել:

1գ) ենթակետ – Օդափոխիչ անցքեր

4.2.1.գ)-1. ա) Նրանց ամենամեծ չափսերը պետք է սկզբունքորեն չգերազանցեն 400 մմ-ը:

բ) Այն անցքերը որոնք հնարավորություն են տալիս ուղղակի մուտք գործելու բեռնարկը պետք է փակվեն՝

i) մետաղյա ցանցով կամ ծակծկված մետաղյա վահանակներով (երկու դեպքում էլ անցքերի առավելագույն չափսը՝ 3 մմ) և պաշտպանված լինեն գողված մետաղյա ցանցով (անցքերի առավելագույն չափսը՝ 10 մմ):

ii) բավականաչափ ամրություն ունեցող ծակծկված մետաղյա վահանակներով (անցքերի առավելագույն չափսը՝ 3 մմ, վահանակի հաստությունը՝ առնվազն 1մմ):

գ) Այն անցքերը, որոնք հնարավորություն չեն տալիս ուղղակի մուտք գործելու դեպի բեռը (օր.՝ ծնկների կամ անդրադարձնող թիթեղյա ցուցանակի համակարգերի առկայության պատճառով) պետք է ունենան նույն հարմարանքները, բայց անցքերի չափսերը կարող են հասնել համապատասխանաբար մինչև 10 և 20 մմ-ի:

դ) Եթե բացվածքներն արված են բրեզենտի վրա, սկզբունքորեն պետք է կիրառվեն սույն գրառումների բ) ենթակետում նշված հարմարանքները: Սակայն դրսից տեղադրված ծակծկված մետաղյա վահանակի և մետաղյա կամ այլ ցանցի տեսքով ներսից տեղադրված խոչընդոտող հարմարանքների կիրառումը թույլ է տրվում:

ե) Նմանատիպ ոչ մետաղյա հարմարանքները կարող են թույլատրվել այն պայմանով, որ անցքերը պահանջվող չափսեր ունենան, իսկ օգտագործվող նյութը բավականին ամուր լինի, որը թույլ չտա զգալիորեն մեծացնել անցքերը՝ առանց տեսանելի վնասվածք թողնելու: Ի լրումն՝ պետք է անհնարին լինի օդափոխիչ հարմարանքի հանումը միայն բրեզենտի մեկ կողմից:

զ) Օդափոխիչ հարմարանքը կարող է ունենալ պաշտպանիչ հարմարանք: Այն կամրացվի բրեզենտին այնպես, որ հնարավորություն տա օդափոխիչի մաքսային զննում կատարել: Այս պաշտպանիչ հարմարանքը կամրացվի բրեզենտին օդափոխիչից առնվազն 5 սմ հեռավորությամբ:

1գ) ենթակետ - Դրենաժային անցքեր

4.2.1. գ)-2. ա) Դրանց ամենամեծ չափսերը պետք է սկզբունքորեն չգերազանցեն 35 մմ-ը:

բ) Այն անցքերը որոնք հնարավորություն են տալիս ուղղակի մուտք գործել դեպի բեռը, պետք է ունենան օդափոխման անցքերի համար հարմարանքը՝ նշված 4.2.1.գ)-1 բացատրական գրառումների բ) ենթակետում:

գ) Այն դրենաժային անցքերը, որոնք հնարավորություն չեն տալիս ուղղակի մուտք գործելու դեպի բեռը, կկիրառվեն սույն գրառումների բ) ենթակետում նշված հարմարանքները, պայմանով, որ անցքերը ունենան ամուր անդրադարձնող համակարգ, որը հեշտությամբ մատչելի է բեռնարկի ներսից:

4.4. Հողված 4

3-րդ ենթակետ – Մի քանի կտորներից կազմված բրեզենտը

4.4.3.-1. ա) Մեկ բրեզենտ կազմող մի քանի կտորները կարող են պատրաստված լինել տարբեր նյութերից, որոնք համապատասխանում են 4-րդ հավելվածի 4-րդ հոդվածի 2-րդ ենթակետի դրույթներին:

բ) Բրեզենտը կազմելու համար թույլատրվում է կտորների տեղադրման ցանկացած ձև, որը հավասարապես ապահովություն է երաշխավորում, պայմանով, որ կտորները հավաքված լինեն 4-րդ հավելվածի 4-րդ հոդվածի դրույթների համաձայն:

Ճա) ենթակետ

4.4.6.ա)-1. Բեռնարկղի բրեզենտի ամրացման և բեռնարկղերի անկյունային ձուլվածքների շուրջ բրեզենտի ամրացման համար կառուցվածքային համակարգի օրինակները, որոնք ընդունելի են մաքսային տեսանկյունից, տրված են սույն հավելվածին կցված N1, N2 և N3 նկարներում:

Ճա) i) - Բրեզենտի բեռնարկղեր սահող օղակներով

4.4.6.ա) - 2. Մետաղյա ամրացնող օղակները մետաղյա ձողերի վրա, որոնք ֆիքսվում են բեռնարկղերին սույն ենթակետի նպատակների համար, ընդունելի են (տես՝ նկար N5, որը կցված է սույն հավելվածին), պայմանով, որ՝

ա) ձողերը ամրացվեն բեռնարկղին առավելագույնը 60 սմ տարածության վրա և այնպես, որ դրանք հնարավոր չլինի հանել և փոխարինել՝ առանց տեսանելի հետքեր թողնելու,

բ) օղակները պատրաստված լինեն կրկնակի օղագոտուց կամ ունենան կենտրոնական ձող և բաղկացած լինեն մեկ կտորից՝ առանց գոդման օգտագործման, և

գ) բրեզենտը ֆիքսված լինի բեռնարկղին սույն Կոնվենցիայի 4-րդ հավելվածի 1-ին հոդվածի ա) կետի պայմանների համաձայն:

Ճա) i) ենթակետ - Բրեզենտե բեռնարկղեր պտտվող օղակներով

Մետաղյա պտտվող օղակները, որոնցից յուրաքանչյուրը պտտվում է մետաղյա բարձակի մեջ՝ ամրացված է բեռնարկղին, ընդունելի է սույն կետի նպատակի համար (տես՝ նկար N6, որը կցված է սույն հավելվածին), պայմանով, որ՝

ա) յուրաքանչյուր բարձակ ամրացված լինի բեռնարկղին այնպես, որ այն հնարավոր չլինի հանել կամ փոխարինել՝ առանց տեսանելի հետքեր թողնելու, և

բ) յուրաքանչյուր բարձակի տակ եղած զսպանակը ամբողջովին ծածկված լինի զանգականման մետաղյա ծածկով:

6բ) ենթակետ – Անփոփոխ ամրացված բրեզենտ

Եթե բրեզենտի մեկ կամ ավելի եզրեր անփոփոխ կերպով փակցված են բեռնարկղին, բրեզենտը պետք է իր տեղում պահվի մեկ կամ մի քանի մետաղյա կամ ալյումինային հարմար նյութից պատրաստված թիթեղով, որը պետք է ամրացվի բեռնարկղի հենասարքին սույն հավելվածի 4.2.1. ա)1 ենթակետի ա) ենթակետի պահանջներին համապատասխան:

8-րդ կետ – Օղակների և բլթանցքերի միջև տարածությունը

4.4.8.-1. Տարածությունը, որը գերազանցում է 200 մմ-ը, բայց չի գերազանցում 300 մմ-ը հենակների վրա, ընդունելի է, եթե օղակները հետ են քաշված կողերի մեջ, իսկ բլթանցքերը օվալաձև են և այնքան փոքր, որ դրանք կարող են անցնել օղակների վրայով:

9-րդ կետ – Տեքստիլ միջահյուս պարաններ կամ կառաններ

4.4.9-1. Սույն կետի նպատակների համար թույլատրվում են կիրառել պարաններ կամ կառաններ, որոնք կազմված են տեքստիլ միջահյուսից, որը պատված է ամբողջությամբ մետաղյա վեց շարաններով և ամբողջությամբ ծածկում է միջահյուսը, պայմանով, որ պարանները կամ կառանները (հաշվի չառնելով թափանցիկ պլաստմասսայե երեսապատումը, եթե այդպիսին առկա է) առնվազն 3 մմ տրամագիծ ունենան:

11 ա) i) ենթակետ - Բրեզենտը ձգող բացովի փեշերը

4.4.11.ա) i) Շատ բեռնարկղերի փեշեր դրսից ունեն հորիզոնական բացովի փեշ, որի ամբողջ երկայնքով տեղադրված են բլթանցքեր: Այդպիսի բացովի փեշերը, որոնք հայտնի են որպես ձգող փեշեր, օգտագործվում են բրեզենտը ձգելու համար ձգող պարաններով կամ նմանատիպ հարմարանքով: Այդպիսի փեշերը օգտագործվել են բրեզենտի հորիզոնական ճեղքերը փակելու համար, որը սակայն մուտք է տալիս դեպի բեռնարկղի մեջ եղած բեռը: Ուստի հանձնարարվում է թույլ չտալ այս տեսակի փեշեր: Փոխարենը կարող են օգտագործվել հետևյալ հարմարանքները՝

ա) ձգող փեշեր կամ նման կառուցվածք, որը ֆիքսված է բրեզենտի ներսին, կամ

բ) փոքր անհատական փեշեր, որոնցից յուրաքանչյուրի վրա կա մեկ բլթանցք, որը ամրացված է բրեզենտի արտաքին ծածկին և այնպիսի հեռավորությամբ, որպիսին թույլ կտա բրեզենտի հավասարաչափ ձգումը:

Որպես այլընտրանք՝ հնարավոր է որոշ դեպքերում խուսափել բրեզենտի վրա ձգող փեշի օգտագործումից:

11ա) iii) ենթակետ - Բրեզենտի գոտիները

4.4.11.ա) iii)-1. Գոտիներ պատրաստելու համար կիրառելի են հետևյալ նյութերը՝
ա) կաշի,

բ) ոչ առաձգական տեքստիլ նյութեր, ներառյալ պլաստմասսապատ կամ ռետինապատ կտորը, պայմանով, որ այդպիսի նյութերը պոկելուց հետո անհնար լինի նորից գողել կամ վերականգնել՝ առանց տեսանելի հետքեր թողնելու:

4.4.11.ա) iii)-2. Սույն հավելվածին կից N3 նկարում ցուցադրված հարմարանքը բավարարում է 4-րդ հավելվածի 4-րդ հոդվածի 10-րդ կետի վերջին մասի պահանջները: Այն նաև բավարարում է 4-րդ հավելվածի 4-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջները:


5. Հավելված 5

5.1. Կետ 1 - Բրեզենտե բեռնարկղերի համակցման թույլտվությունը

5.1.-1. Եթե երկու բրեզենտե բեռնարկղեր, որոնք թույլատրված են մաքսային կնիքներով և կապարակնիքներով փոխադրումներ կատարելու համար, իրար են միացվել այնպես, որ կազմել են մեկ բեռնարկղ, որը ծածկված է մեկ բրեզենտով և բավարարում է մաքսային կնիքներով և կապարակնիքներով փոխադրումներ կատարելու պայմանները, ապա այդ համակցված բեռնարկղի համար առանձին թույլտվության վկայական կամ թույլտվության ցուցանակ չի պահանջվում:

ՀԱՎԵԼՎԱԾ 6 Նկար N 1
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՐՄԱՐԱՆՔԸ ԿՈՆՏԵՅՆԵՐԻ ԲՐԵԶԵՆՏԸ
ԱՄՐԱՅՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ստորև ներկայացված այս հարմարանքը բավարարում է 4-րդ հավելվածի 4-րդ հոդվածի
6ա) ենթակետի պահանջները




6 ՀԱՎԵԼՎԱԾ – Նկար N 2

ԿՈՆՏԵՅՆԵՐԻ ԱՆԿՅՈՒՆԱՅԻՆ ՁՈՒԼՎԱԾՔՆԵՐԻ ՇՈՒՐՁ ԲՐԵՁԵՆՏԻ
ԱՄՐԱՑՄԱՆ ՀԱՐՄԱՐԱՆՔԸ

Ստորև ցուցադրված այս հարմարանքը բավարարում է է 4-րդ հավելվածի 4-րդ հոդվածի
6ա) ենթակետի պահանջները

Ամրացումը անկյունային սյուների մոտ



Տանիքի բրեզենտը




Կտրվածքը

ՀԱՎԵԼՎԱԾ 6– Նկար N 3


ԿՈՆՏԵՅՆԵՐԻ ԵՎ ԲՐԵՉԵՆՏԻ ԱՄՐԱՅՄԱՆ ՄԵԹՈԴԻ ԵՎՍ ՄԵԿ ՕՐԻՆԱԿ

Ստորև ցուցադրված հարմարանքը բավարարում է 4-րդ հավելվածի 4-րդ հոդվածի 10-րդ կետի վերջին մասի պահանջները: Այն բավարարում է նաև 4-րդ հավելվածի 4-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջները




6 ՀԱՎԵԼՎԱԾ – Նկար N 4


ԻԶՈԹԵՐՄԻԿ ԲԵՌՆԱՐԿՂԵՐԻ ԴՈՆԵՐԻ ԾՂԽՆՈՒ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ
ԿԱՊԱՐԱԿՆԻՔԻ ՀԱՐՄԱՐԱՆՔԻ ՕՐԻՆԱԿ



ՀԱՎԵԼՎԱԾ 6– Նկար N 4
ՍԱՀՈՂ ՕՂԱԿՆԵՐՈՎ ԲՐԵԶԵՆՏԵ ԲԵՌՆԱՐԿՂ




ՀԱՎԵԼՎԱԾ 6– Նկար N 6
ՊՏՏՎՈՂ ՕՂԱԿԻ ՕՐԻՆԱԿ (ԿԻՍԱՕՂԱԿ)



ՀԱՎԵԼՎԱԾ 6– Նկար N 7


ԾԽՆՈՒ ՕՐԻՆԱԿ, ՈՐԸ ՍՈՆԱԾԱՅՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՏՈՒԿ ՊԱՇՏՊԱՆՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՉԻ ՊԱՀԱՆՁՈՒՄ

Ներքոնշյալ ծխնին համապատասխանում է 2.2.1. ք) բացատրական գրառման ք) ենթակետի երկրորդ նախադասությանը: Թիթեղի և փականի կառուցվածքը բացառում է սռնաձայրի հատուկ ամրացման անհրաժեշտությունը, քանի որ թիթեղի թևերը անցնում են փականի եզրերից: Այսպիսով, թևերը խոչընդոտում են կապարակնքված դռան բացումը չամրացված սռնաձայրը հանելուց հետո՝ առանց տեսանելի հետքեր թողնելու:



ՀԱՎԵԼՎԱԾ 6– Նկար N 8

ԱՄՐԱՑՄԱՆ ՀԱՐՍԱՐԱՆՔԻ ՕՐԻՆԱԿ, ՈՐԸ ՄՏՅՎՈՒՄ Է ԻՉՈԹԵՐՄԻԿ ԳՈՒՆ ՆԵՐՄԻՅ



ՀԱՎԵԼՎԱԾ 7

ԱԴՄԻՆԻՍՏՐԱՏԻՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Հոդված 1

1. Ադմինիստրատիվ կոմիտեի անդամները հանդիսանում են Պայմանավորվող կողմեր:

2. Կոմիտեն կարող է որոշել, որ սույն Կոնվենցիայի 18-րդ հոդվածում նշված պետությունների իրավասու ադմինիստրացիաները, որոնք Պայմանավորվող կողմեր չեն, կամ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները կարող են այն հարցերի համար, որոնք նրանց հետաքրքրում են, ներկա գտնվել Կոմիտեի նիստերին որպես դիտորդներ:

Հոդված 2

Մաքսային համագործակցության խորհուրդը Կոմիտեին կտրամադրի քարտուղարության ծառայությունները:

Հոդված 3

Կոմիտեն ամեն տարի իր առաջին նիստին կընտրի նախագահին և փոխնախագահին:

Հոդված 4

Պայմանավորվող կողմերի իրավասու ադմինիստրացիաները Մաքսային համագործակցության խորհրդին կուղարկեն սույն Կոնվենցիայի առաջարկվող փոփոխությունները և դրա պատճառները հանձնաժողովի նիստերի օրակարգերի մեջ կետերը ներառելու ցանկացած պահանջով: Մաքսային համագործակցության խորհուրդը կուղարկի դրանք Պայմանավորվող կողմերի և սույն Կոնվենցիայի 18-րդ հոդվածում նշված, Պայմանավորվող կողմեր չհանդիսացող պետությունների իրավասու ադմինիստրացիաներին:

Հոդված 5

1. Մաքսային համագործակցության խորհուրդը կգումարի Կոմիտեի հանդիպումը առնվազն հինգ Պայմանավորվող կողմերի իրավասու ադմինիստրացիաների պահանջով: Այն օրակարգի նախագիծը կուղարկի Պայմանավորվող կողմերի և սույն Կոնվենցիայի 18-րդ հոդվածում նշված, Պայմանավորվող կողմեր չհանդիսացող պետությունների իրավասու ադմինիստրացիաներին կոմիտեի հանդիպումից առնվազն վեց շաբաթ առաջ:

2. Կոմիտեի որոշմամբ, որը կայացվում է սույն կանոնների 1-ին հոդվածի 2-րդ կետի դրույթների համաձայն, Մաքսային համագործակցության խորհուրդը կիրավիրի սույն Կոնվենցիայի 18-րդ հոդվածում նշված, Պայմանավորվող կողմեր չհանդիսացող պետությունների իրավասու ադմինիստրացիաներին և շահագրգիռ միջազգային կազմակերպություններին՝ ներկա գտնվելու Կոմիտեի նիստերին որպես դիտորդներ:

Հոդված 6

Առաջարկությունները քվեարկության կդրվեն: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, որը ներկայացված է հանդիպմանը, կունենա մեկ ձայն: Առաջարկությունները, որոնք սույն Կոնվենցիայի փոփոխություններ չեն, կընդունվեն Կոմիտեի կողմից ներկա և քվեարկող մեծամասնությամբ: Սույն Կոնվենցիայի փոփոխությունները և սույն Կոնվենցիայի 21-րդ հոդվածի 5-րդ կետում ու 22-րդ հոդվածի 6-րդ կետում նշված որոշումները, որոնք վերաբերում են փոփոխությունները ուժի մեջ մտնելուն, կընդունվեն ներկա և քվեարկող ձայների երկու երրորդի մեծամասնությամբ:

Հոդված 7

Նախքան նիստի ավարտը Կոմիտեն կհաստատի զեկույցը:

Հոդված 8

Սույն հավելվածում համապատասխան դրույթների բացակայության դեպքում կկիրառվեն Մաքսային համագործակցության խորհրդի ընթացակարգերի կանոնները, եթե Կոմիտեն այլ որոշում չի կայացնի:

ՄՏՈՐԱԳՐՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Սույն Կոնվենցիայի սույն օրը ստորագրման պահին ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով իրենց կառավարությունների կողմից, կատարեցին հետևյալ հայտարարությունները՝

1. Ներմուծման ժամանակ ներմուծման հարկերը և տուրքերը հաշվարկելու նպատակով ժամանակավոր ներմուծման թույլտվություն ստացած բեռնարկղերի քաշը կամ արժեքը դրանց պարունակած բեռների քաշին կամ արժեքին ավելացնելը հակասում է բեռնարկղերի ժամանակավոր ներմուծման սկզբունքին: Բեռնարկղերում փոխադրվող բեռների քաշին օրինականորեն որոշված տարայի քաշի ավելացումը թույլատրելի է, եթե այն կատարվում է փաթեթավորման բացակայության կամ նրա հատուկ բնույթի պատճառով և ոչ թե այն պատճառով, որ բեռը փոխադրվում է բեռնարկղով:

2. Սույն Կոնվենցիայի պայմանները չեն արգելում բեռնարկղերի օգտագործումը կանոնակարգելու նպատակով ազգային դրույթների կամ միջազգային համաձայնագրերի կիրառումը, որոնք մաքսային բնույթի չեն:

3. Ներքին ծավալի մեկ խորանարդ մետրը, ինչպես նախատեսված է սույն Կոնվենցիայի 1-ին հոդվածով, չի ենթադրում ավելի սահմանափակող կանոնակարգերի կիրառումը ավելի փոքր ծավալով բեռնարկղերի նկատմամբ, և Պայմանավորվող կողմերը կաշխատեն կիրառել նույն ժամանակավոր ներմուծման ընթացակարգերը վերջիններիս նկատմամբ, որոնք նրանք կիրառում են սույն Կոնվենցիայում սահմանված բեռնարկղերի նկատմամբ:

4. Այնքանով, որքանով որ կիրառելի են սույն Կոնվենցիայի 6-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներում նախատեսված բեռնարկղերի ժամանակավոր թույլտվության ընթացակարգերը, Պայմանավորվող կողմերը ընդունում են, որ բոլոր մաքսային փաստաթղթերի և երաշխիքների վերացումը հնարավորություն կտա նրանց հասնելու սույն Կոնվենցիայի գլխավոր նպատակներից մեկին, և նրանք ամեն ջանք կներդնեն դրան հասնելու համար: